 և մեղուք. ոմանք՝ ի պատիւ. ոմանք՝ ի

խոնարհեցուցանել զմեզ. որպիսիք և
լուք և ճանճք. որ մարդիկ ոչ կարեն
զերծանիլ 'ինցնէ: Չի թէ մարդ ընդ
դէմ քո բան ինչ անախորժ ասէ, դու
բարկանաս և վիրաւորիս. զիմորդ ոչ կա
րես ընդ դէմ կալ լռնոց և ճանճից՝ որք
միշտ անհանգիստ պահեն զքեզ: Եւ
ոմանք 'ի հոտ. և ոմանք 'ի համ. ոմանք
'ի տեսս. ոմանք 'ի գոյնս. ոմանք 'ի ձայնս
օգուտ են: Եւ պառւերմն յայտնի է որ ոչ
ինչ է յաշխարհի անօգուտ:

Եւ որորդ՝ զի տեսանի բազում ինչ յաշ
խարհի անկարգ և լի մեղք և չարու
թք. վս այն ասեն թէ, չար այն է ըս
տեղծուած: Պիտիանեն վարդապետք
թէ, ընդհանուր ամ արարածք կարգա
ւոր են. ուր ասէ սղատուն թէ, ոչ ինչ է
յաշխարհի որոյ ծնունդն նախընթաց
ոչ լինի ճշմարիտ պատճառին. ուր գրէ
յոբ թէ, (ոչ ինչ է յերկրի որ անպատ
ճառ լինիցի): Եւ թռչունք փոքունք
առանց նախատեսութեն այ ոչ անկա
նին ասէ Թորն. (երկու ճրնճղուկք՝ դան
կի միջ վաճառին. և մի 'ինցնէ ոչ ան
կա

կանի առանց հօր ձերոյ։) Նոյնպէս և
 Ժողովօղն ասէ։ (մի' ասիցես թէ առաջի
 ւայ տգիտութեւ։ զի մի' բարկասցի ամբ։)
 Եւ դարձեալ ասէ, (թէ զբարարութի
 աղքատաց և յաւիշտակութի իրաւանց և
 արդարութեւ տեսցես, մի' զարմանար.
 քանզի զբարձունս իւր բարձանց պա-
 հէ։ և իւր ամի թագաւորէ։) Այսո
 րիկ զոր ինչ բարի է յաշխարհի' ամ ըստ
 ի բուժ կամացն առնէ. և զոր ինչ չար է.
 արդարութեւ և իմաստութեւ թոյլ տայ
 քննել։ Բայց զեղեալ չարն բարոք կար
 գաւորէ երեք կերպիւ։ Սախզի' չարութեւ
 մեղացն պատիժ տայ. զի մի' աղտե
 ղութիւն մեղացն լիցի առանց դեղչիկ
 վրէժխնդրութեւ։ Եւ այսպէս վայելչա
 բար յուրա 'ի դժոխս տանջի. ոսկն է
 աղօա 'ի յոսկի մատանի։ Երկրորդ՝ զի
 բարութիւն մերձ չարութեւն եղեալ,
 գեղեցկասպէս ցուցանի. ոսկն որակ սևութեւն
 ըստ ինքեան անզարդ է. բայց 'ի
 պատկերագրութեւ արհեստն՝ 'ի պատշա
 ճաւոր տեղի կարգեալ ազնիւ երևի։
 Եւ այսպէս չարութիւն ինքն ըստ ինքեան
 աղտե

աղտեղի է. բայց յաշխարհիս 'ի պատշա
 ճաշոր տեղի եդեալ. գեղեցիկ երևի աշ
 խարհս: Երրորդ՝ վս զի չարութի վա
 րացն օգուտ առնէ բարեացն. ոմ ասէ
 պօղոս. (դիտեմք էթէ որոց սիրենն զամ,
 յամի գործակից լինին 'ի բարիս.) վասն
 այն զդէսն ստեղծ ամ բարի. և ըստ իւ
 րեանց կամացն չարացան. ամ կարգա
 չորեաց զնոսա 'ի յօգուտ բարեացն. և
 նախ քան զըստեղծանելն նց՝ ճանաչէր
 ամ որ բազում բարութի 'ի չարութե
 նց արտաքս գալոց էր. վս այն ամ ստեղ
 ծանէ զչարն 'ի մարդկանէ և թէ 'ի դի
 շաց: Եւ պա ուրեմն առարկութի մանի
 քեցւոցն ընդունայն է. վս զի ամ զոր
 ինչ չարութի և տնկարդութիւն թողու
 յաշխարհիս՝ յետոյ զամ 'ի կարգ և 'ի
 սահման ածէ:

Երրորդ ասեն թէ՝ պատճառն անփո
 փոխելի է. պարտ է զի և պատճառն
 լին անփոփոխելի լինէր: Եւ զի ամ ան
 փոփոխելի է. և ապականացուքս փոփո
 խական. ապա ուրեմն յայ բարւոյն ոչ
 են. այլ 'ի չարեն: Եւ եմք թէ՝ այս առ

արկուծիս կարի տկար է. զի յընդհանուրսն՝ ոչ է պարտ թէ պատճառելին յամի նման լինի պատճառին. որ ազատ կամօք ներդործէ։ Այս զի տեսանեմք որ աղտեղի պատկերագործն՝ գեղեցիկ պատկեր յօրինէ. և գեղեցիկն երբեմն աղտեղի։ Դարձեալ՝ առարկուծի նց ընդդէմ է նց. իսկ զի նոքա ասեն թէ, չար անձն յաշխտեանական է. և անպատճառ է ապականացնածս որք ժամանակաւորք են. ապա ուրեմն պատճառելին ոչ է նման պատճառին։

Ինգերորդ ասեն թէ, պատճառելիքն միմեանց ներհակք են. պարտ է եւ պատճառի նց դու ներհակ. բայց չարն և բարին ներհակք են միմեանց, ապա ուրեմն և պատճառի նց պարտ է ներհակ դու. իսկ բարին անբարեաց պատճառ է. ապա ուրեմն պարտ է և պատճառ չարին չար անձ լինիլ։ Եւ բերեն վկայու թի յարիստոտէլէ որ ասէ թէ, (Իհարկէ պարտ է զի սկզբունքն ներհակք լի նին։) Պատմութեանն վարդապետք թէ, առարկուծիս այս բազում պակասուի

նի. զի առաջին բանն նց՝ յամ ուրեք
 ոչ է ճշմարիտ. զի երկու կերպիւ ասի
 պատճառ ըստ արիւտութիւնի։ Մին որ
 բնութեմ ներդործէ առանց կամաց եզի
 տութեմ. ոմ չուրն և ջուրն. և այսպէս
 ճշմարիտ է՝ յորժամ պատճառելիքն ներ
 հակեմ. այսինքն, ջերմացուցանելն
 և ցրտացուցանելն, վս այն պարտ է զի
 չուրն և ջուրն ներհակք լինիցին մի
 մեանց։ Երկրորդ պատճառ է. որ գի
 տութեմ և կամօք ներդործէ, և աստ ոչ է
 ճշմարիտ. վս զի մի՛ զօրութի բանական՝
 իշխէ իւր երկուց ներհակաց, որոյս մի
 զօռախաղործն՝ կարող է մի գեղեցիկ
 պատկեր առնել և մի դարչ. մի սեռ և
 մի սպիտակ։ Աս այն դրէ պողոս՝ իհռօ
 մայեցւոց. (մի թէ ո՛չ ունի իշխանութի
 բրուտն կաւոյն՝ ինմին զանկոճածոյ առ
 նել անօթս, զոմն՝ իպատիւ, և զոմն յա
 նարգանս։) Եւ այս է պատճառն. զի
 բնութեմ պատճառն ներդործէ տեսա
 կաւ բնութեն, և անկարելի է որ մի ինչ
 երկու տեսակ ըստ բնութեան ներհակք
 միմեանց լինին՝ նմին իրի երկու ներհակ

պատճառի ոչ կարէ առնել: Բայց բա
նական պատճառն ներգործէ միջնոր
դութիւն հոգեոր տեսական. բայց երկու
ներհակաբանութիւն 'իմիտսն զոր ընդու
նի ոչ են ներհակաբան: Զոր օրինակ սեռն
ևս պիտակն բնութիւն ներհակաբան:


Ասան այսորիկ եթէ բարին և չարն ներ
հակաբան, ոչէ հարկ թէ առաջին պատ
ճառն սոցա ներհակ լինի. բայց 'իմիոյ
պատճառէ՝ հնար է երկուցն լինիլ:

Իսկ արիստոտէլի բանն ոչ օգնէ նոյն. զի
արիստոտէլ ոչ ասէ զայս վասն հասարա
կացս սկզբան առաջնոյ. այլ վս սկզբա
մանց բնութիւն. վս զի հաստատէ թէ,
երեք սկիզբն է բնութիւն. մի նիւթ. և
ներհակ. և տեսակ: Ասան զի յորժամ
նիւթն զմի տեսակն կորուսանէ, միւս
տեսակ այլ ընդունի: Բայց վս առաջին
սկզբան՝ արիստոտէլ հաստատէ թէ, մի է
սկիզբն: Եւ աւելոյս ասէ. որ ոք յառա
ջին հասարակաց սկիզբն ներհակ դնէ՝
անդէտ է. վասն այնորիկ մանի որ եր
կու առաջին սկիզբն է եղեալ, յորժ յի
մար է եղեալ: Եւ և երկրորդ բանն նոյն

որք ասեն թէ բարին և չարն ներհակ
 են. ոչ է ճշ և արիտ. վասն զի բարին և
 չարն ոչ են որպիս երկու ներհակք. այս
 ինքն, սեռն և սպիտակն. այլ ունա
 կու թի և պակասու թի: Եւ այս է պատ
 ճառն. վս զի երկու ներհակքն բնուի
 ունին. ուն ջերմու թին և ցրտու թին.
 սևու թին և սպիտակու թին: Բայց ու
 նակու թին և պակասու թին՝ ոչ են այն
 պէս. այլ ունակու թին միայն ունի բնու
 թի. իսկ պակասու թին ոչ ունի բնուի.
 այլ պակասու թի է բնու թէն: Եւսպէս
 բարին բնու թի ունի, բայց չարն ոչ է
 բնու թի. այլ պակասու թի է բարւոյն:
 Եւ թէ ոք ասիցէ թէ, արիստոտէլ ի
 տասն ստորագու թիւնսն ասէ թէ՝ (չարն
 ներհակ է բարւոյն) Եւսեմք թէ՝ արիս
 տոտէլ ընդարձակագոյն առնու ըզնե
 հակսն. իտեղի ունակու թի և պակասու
 թի: Եւ յորժամ չարն ոչ այլ ինչ է,
 բայց պակասու թի բարւոյն՝ ոչ է հարկ
 երկու առաջին պատճառ դնել. մի վս
 բարւոյն. և մի վս չարին: Եւ վասն չա
 րու թէն որ պակասու թի է, մի առաջին



սկիզբն ասել ստեղծող յիմարութի է .
 վս զի իբարի ստեղծունածոցս՝ կարելի է
 չար արտաքս դալ . այսինքն , յազատ
 կամաց բանական ստեղծունածոց :
 Ձի ազատ կամքն որ ստեղծունած է այ՝
 կարօղ է բարի առնել և չար . վս զի ըստ
 այնմ որ ստեղծունած այ է , կարող է բա
 րի առնել . այլ ըստ այնմ որ յոչընչէ ըս
 տեղծեալ եղև , կարէ պակասիլ և չար
 առնել որ պակասութի բարւոյն է :
 Աս այսորիկ մանիքեցիքն վս չարութեն
 երկու անձս ասացին . զի ոչ իմացան թէ
 զի՞նչ է չարն . համարեցան բնութի լի
 նիլ չարին : Բայց դիտնէսիոս գրէ թէ՝
 չարն բնութի ոչ է . այլ պակասութի է
 բարութի : Գիտելի է՝ որ չարն կրկին է .
 մին է պատիժն . և միւսն մեղքն :
 Ըռալին չարն այ է . վս զի ոչ է ամենև
 ն չար պատժել զմեղաւորն և զմեղսն .
 զի այս դործ արդարութի է : Երկրորդ
 չար մեղացն՝ ոչ է ըստեղծեալ . այլ ի
 ստեղծունածոցս է . որ բարի ստեղծեալ
 եղև . բայց յատուկ կամօքն չարացաւ .
 նմին իրի չարն ՚ի նմանէ յառաջ գայ :



Եւ զի յամ ստեղծւածոց կարելի է չար
 եբարի արտաքս դալ. օրինակաւ հաս
 տատեսցուք: Ուղիղ գնալն և կաղալն մի
 պատճառ ունին. վասն զի է 'իստեմէ.
 բայց ուղիղ գնալն է' յորժամ առողջ է
 և պակասութի ոչ ունի. իսկ կաղալն է
 'ինմանէ. յորժամ պակասութի և թիւրու
 թիւ ինչ ունի: Եւ յսպէս չարն և բարին
 է յանձն իշխան կամացն. վս այն ետայի
 ասէ. (տնկեցի զնա որ թսորեակ. և մնա
 ցի զի բերցէ ինձ խաղող. և եբեր փուշ:)
 Երեմիա ասէ. (ես տընկեցի զքեզ որ թ
 պողաբեր ամենեին ճշմարիտ. զի արդ
 դարձար ինձ 'ի դառնութի որ թ դ օտա
 րացեալ:)

Դարձեալ մեք եղծցուք զբանս մա
 նիքեցւոցն. որք երկու սկիզբն և
 երկու ւածս ասեն: Եւ զայս հինգ մօօք
 'իկարճոյ: Եւ աջին' զի երկակն ոչ կա
 րէ սկիզբն լինիլ. զի 'ի թիւս երկակն' ի
 միակէ բաղկանայ: Եւ որ նախ է որ բաղ
 կացոյցն քան որ բաղկացաւն: Եւ կրօրդ
 երկակն բաղադրել է. իսկ միակն պարզ.
 այլ ամ բաղադրեալ 'ի պարզէ է. ապա

ուրեմն ոչ է երկակն սկիզբն որ է բաղադ
 րեալ ալ միակն որ է պարզ։ Երրորդ՝
 թէ երկու է սկիզբն և հակառակ՝ մար
 տնչէին ընդ միմեանս և ընդ սկսեալս իւ
 րեանց՝ և ոչ ինչ մնայր 'ի խաղաղութի։
 Չորրորդ՝ թէ լինէին երկու անձք հա
 կառակք՝ մի զմիոյ ստեղծութեամբս ապա
 կանէին. և ոչ լինէին արարածք ինչ։
 Հինգերորդ՝ եթէ են երկու անձ, կամ
 զմիմեանս ճանաչեն կամ ոչ ճանաչեն.
 և եթէ ոչ ճանաչեն՝ երկոքեանն սուտ
 են. և եթէ ճանաչեն, կամ տեսակաւ
 ճանաչեն զոր ունին, և այսպէս բաղադ
 րեալ են դոյացութեն զոր ունին, և տե
 սակաւ զոր ընդունին, որ է պատհումս.
 և կամ ճանաչեն պատրաստութեն երկ
 նային և բնութի նորին՝ որ յինքն մերձե
 նայ և զնա կատարէ. և անկատար են։

Զոր օրինակ՝ աչք զորակութիւն տեսա
 նէ. և զլոյսն և ս տեսանէ. բայց ըստ այլ
 կերպի. վասն զի զորակութիւն տեսանէ
 միջնորդութի տեսակին. զի 'ի նմանէ
 ընդունի. բայց զլոյսն տեսանէ հուր
 ներկայական. վասն զի հուր լուսոյն

ային մի 'իթիւ ոչ լինի 'ի նս. այլ մի
'իտեսակս: Եւ յորժամ ոչ է մի 'իթիւ,
պարտ է 'ինմա առաւելուի ինչ լինիլ
որ տարբերէ զքնուին և տրամատէ յան
հաստ իւրաքանչիւր անոց: Բայց բնու
թիւն անային որ ամենևին պարզ է, ոչ
կարէ առաւելու թի ինչ ընդունիլ. ոչ
գոյացական և ոչ պատահական:

Ձի թէ ընդունի, ոչ լինի պարզ. այլ
բազադրեալ: Եւ պառերեմն ոչ է հնար
բազում ան լինիլ այլ. միայն մի:

Եւ թէ ոք ասէ թէ, գոյացական տե
սակն ունի բանական հոգին՝ 'իբազում
անհաստ տարբերի և ոչ ինչ յաւելուած
ընդունի. ապա ուրեմն անային տեսակն
կարէ 'իբազում անհաստ տարբերիլ ա
ռանց յաւելուած ընդունելոյ:

Պատասխանի թէ, այս ոչ նմանի այնմ.
Վս զի գոյացական տեսակն 'ինիւթն ըն
դունեալ լինի. և 'իբազում մասունս
նիւթոցն տրամատի և տեսակն. ունի բա
նական հոգին: Եւ անային տեսակն
ոչ կարէ 'ինիւթ ինչ հազորդիլ. ուստի
'ըմասունս նիւթոցն ոչ կարէ տարբերիլ

ոսկի հոգի. ապա ուրեմն ոչ կարէ լինիլ
 բազում անձ: Երկրորդ՝ զի գրէ արիս-
 տոտէլ Թէ, (որ ինչ գերազանցութեւ
 սի, 'իմի ինչ միայն գտեալ լինի:)
 Չոր օրինակ՝ Թէ ոք ասի կարող, կա-
 րողագոյն, կարողագոյն յոյժ, մի լինի.
 բայց բարութիւն անձային գերազանցութեւ
 ասացեալ լինի. ոչ միայն բարի,
 կամ բարեգոյն, այլ բարեգոյն յոյժ.
 ապա ուրեմն մի է անձ: Երրորդ՝ զի հարկ
 է այն ամենեւին կատարեալ լինիլ. զի ա-
 սէ արիստոտէլ Թէ, (այլ ինչ իր ըստ մի
 կերպի ունի զկատարելութիւնն. բայց
 անձ ամենեւին կատարեալ է:) Եւ այն է
 ամենեւին կատարեալ, որ բնաւ կատա-
 րելութիւն ոչ է պակաս 'ինմա. և ոչ պա-
 կասութիւն ինչ գտանի առ նա. ապա ու-
 րեմն յորժամ բազում է անձ, պարտ է
 զի բազում ինչ ամենեւին կատարեալ լի-
 նի. և այս անկարելի է. վս զի անձ կա-
 տարելութիւն առ իւրաքանչիւր ոք լի-
 նէր. և պակասութիւն բնաւ 'ինս ոչ գտա-
 նէր. ապա ուրեմն յայնժամ զանազանութիւն
 բնաւ 'ինոսա ոչ լինէր:

լինին, կամ զոյդ շարժեն, կամ կար
 գաւ. երբեմն մինն. եյետոյ միւսն:
 Եւ եթէ զոյդ շարժեն, առ նոսա բնաւ
 ոչ գոյ կատարել շարժող. վն զի ամբն
 են 'իմի շարժողի տեղ. ապա ուրեմն բը
 նաւ առ նոսա առաջին շարժող ոչ գոյ.
 վն զի առաջին շարժողին՝ պարտ է կա
 տարեալ լինիլ. իսկ եթէ զոյդ ոչ շար
 ժեն, այլ մին առաջին. և միւսն յետոյ,
 իւրաքանչիւր ոք երբեմն շարժէ. և եր
 բեմն ոչ. ապա ուրեմն երբեք առ նոսա
 առաջին շարժող ոչ լինի: Եւ այն շար
 ժումն զոր շարժեն՝ նոյնպէս ոչ լինի.
 վն զի շարժողն որ երբեմն շարժէ, և եր
 բեմն ոչ. անկարգ շարժէ. զոր օրինակ՝
 ներքին շարժումնս որ բռնութիւն լինի՝
 այլայլի և անկարգաբար շարժի. վն զի
 սկիզբն փութով անցանէ. և 'ի վերջոյ
 յամր. բայց այն որ բռնութիւն շարժի,
 ընդդէմ այսմ 'ի սկիզբն յամր, և 'ի կա
 տարածն փութով շարժի: Եւ պառնեմն
 առաջին շարժումն որ մշտաշարժ է և
 կարգաւոր՝ 'ի հարկէ պարտ է որ 'իմի
 լէ շարժողէ շարժի. և այն առաջին մի

շարժողն ամ է. ապառուրեմն պարտ է մի
 ամ լինիլ: Աեցերորդ՝ ասեն փիլիսո
 փայքն թէ, զգալի գոյացու թիքս կար
 գաւորին 'ի հոգեւոր գոյացու թէն. վս
 զի հոգեւոր գոյացու թին՝ առաւել ունի
 զբարու թին. նմին իրի զգալի գոյքս՝
 բաղձան մի՛ շտ նմանիլ նմա: Բայց ամ
 շարժմունք զգալիք՝ կարգաւորեալ են
 'ի միոյ առաջին շարժմանէն. և 'իներ
 քոյ ձեռին նրեն. և բաց 'ինմանէ ոչ է
 այլ շարժումն որ առ նա վերաբերին:
 Այա ուրեմն ամ զգալի գոյացու թիք՝
 կարգաւորեալ լինին 'ի հոգեւոր գոյա
 ցու թէն. որ վախճան է և կատարած
 առաջին շարժմանն: Եւ բաց 'ի հոգեւոր
 գոյացու թէն՝ այլ ոչ ևս գոյ, ոպ զի 'ի
 ներքոյ ձեռին նր լինէր: Եւ զայն ամ
 ասեմք. ապառուրեմն մի է ամ:
 Եւ թնեքորդ՝ վս զի ամ յոյժ սլարդ է.
 վս այն ոչ ինչ իր հասարակ ունի ընդ
 այլ իր. եթէ ունի ինչ հասարակ ընդ
 այլս, պարտ է նմա և յատկութի լինիլ.
 ոպ զի տարբերիցի յայլոցն. վս զի առ
 այն որ հասարակ է՝ զանազանութի ոչ
 լինի.

լինի. բայց թէ ամ ունի ինչ հասարակ,
 ունի և մասնաւոր. ապա ուրեմն բաղադ-
 րեալ է. և այս սո՛ւտ է. Բայա՝ ի հարկէ
 պարտ է զի ամ ոչ ունիցի հասարակութի
 առ այլս. ապա ուրեմն դու ինչ հասա-
 րակութի ոչ ունի առ այլ իրս. և ոչ ամ
 այինն: Բայա ուրեմն թէ են երկու ամք,
 ոչ ոքն է ամ. վս զի թէ մինն՝ ինցն է
 է, միւսն ոչ է. և թէ մինն ամ է, միւսն
 ոչ է. ապա ուրեմն ոչ են երկու. այլ մի
 ամ: Բայց կարէ ոք ընդդէմ այսմ առ-
 արկել թէ, ամ որ ստեղծող է՝ ունի ինչ
 հասարակութի առ ստեղծո՞ւնածս. վս
 զի երկոքին է են. ապա ուրեմն ոչ է ան
 կարելի, թէ ամ ունի ինչ հասարակութի
 առ այլ ամս: Պատասխանի տան
 և ասեն թէ, ստեղծողն առ ստեղծո՞ւնածս
 ոչ ունի ինչ հասարակութի. վս զի ոչ
 ինչ վաղանունաբար ստորոգի ստեղծո-
 ղին և ստեղծո՞ւնածոցս. այլ և՛ ի դուն ի հա-
 ւանունաբար՝ ոչ ստորոգի երկուցն. վս
 զի դուն կրկին է. մինն առանց շարժման
 և անշարժ՝ և այս յատուկ այ է. և միւսն է
 շարժական և իմիմիակալան. և այս ստո-

րողի ստեղծուածոցս: Ութներորդ' ա-
 սեն փիլիսոփայքն թէ, յորժամ բա-
 զումք առ միմեանս կարգաւորին, կար-
 գաւորութիւննց 'իմի ինչ հայի: Զոր-
 օրինակ' ասէ արիստոտէլ թէ, զորք թա-
 գաւորի երկու կարգ ունին. մին որ
 զօրքն առ միմեանս ունին, որ զմիմեանս
 պահեն. և միմեանց օգնեն: Երկրորդ
 կարգ է վս զի ամ զօրքն կարգաւորեալ
 են 'իզօրագլխէն. բայց առաջին կարգն'
 վս երկրորդ կարգիս է. վս զի ամ զօրքն
 վս այն կարգաւորեն զինքէնս զի կամք
 թագաւորին կատարի և թշնամիքն պար-
 տին: Եւ այս է պատճառն. վս զի այս
 կարգս զոր ունին զօրքն' կամ յինքեանց
 'իզօրացն է և 'իբազում զօրագլխոցն, և
 կամ 'իմիոյ 'իզօրագլխէ. 'իբազում զօ-
 րացն ոչ կարէ լինիլ. վս զի բազում են
 զօրքն և զանազանք. և բարք իւրաքանչ
 իւրոյ յատուկ. և կամք: Եւ ոչ կարէ լի-
 նիլ 'իբազում զօրագլխոց. վս զի ըստ
 այնմ որ բազումք են և զանազանք իւրա-
 քանչիւրոցն յատուկ կամք, ոչ կարէ լի-
 նիլ որ մի հասարակաց կարգ լինի բա-
 զում

ըղում կամքն: Լ'պա ուրեմն պարտ է որ
'իմիոյ զօրագլխէ լինի կարգեալ:

Եւ յորժամ բազումք զմիմեանս կարգա
ւորեն, պարտ է զի դիտաւորութի սոցա
'իմի ինչ հայի: Բայց ամ մասունք աշ
խարհիս՝ առ միմեանս կարգաւորութի
ունին: Վս զի ներքին մարմինքս՝ կար
գաւորեալք են 'ի վերին մարմնոցն. և 'ի
նոյնէ խնամարկին. իսկ նոքա 'ի հոգեոր

գոյացութեց: Լ'պա ուրեմն պարտ է որ
ընդհանուր աշխարհիս՝ մի խնամող և
կարգաւորիչ լինի՝ և այն է ամ: Իսկ թէ
ոք առադրէ ընդդէմ թէ, կարգ աշխար
հիս ոչ է 'իմիոյ. այլ բախտ է:

Եւեմք թէ սուտ է. Վս զի որ ինչ բախտ
է, յամելով լինի և սակաւուց: Զոր օրի
նակ՝ թէ ոք բոլե զերկիր Վս ոսկւոյ, այս
սակաւուց պատահի և անադան. բայց
կարգ աշխարհիս միշտ է. ոսկ արեգա
կան ծագելն: Եւ կամ բազում անգամ.
ոսկ մարդն յորժամ ծնանի միագլխի և
հինգ մատնի: Լ'պա ուրեմն այս կարգա
ոչ ասի բախտ. այլ 'ի նմանէ որ կարգա
ւորէ զամ. ապա ուրեմն մի է ամ:

Իններորդ՝ ամային բնութիւն կամ ան
 հաս է եղեալ առաւելութիւն ինչ իրաց.
 ապա ուրեմն բաղադրեալ է. ոսկի բնութիւն
 մարդկային առաւելել ինչ անուն պետ
 թոս և յակօրոս, անհատ լինի. վասն զի
 բաղադրեալ եղև. և այս ամ ասել ան
 կարելի է. բայց թէ ընդ քեան անհատ
 է, ապա ուրեմն ոչ լինի հասարակաբար
 ի վր թաղմաց. վս զի այն որ սկիզբն է
 անհատի՝ ի բազումն ոչ դտանի. այլ
 միայն ի մինն. զի որ զպետրոսն առնէ՝
 միայն ի նա դտանի. ապա ուրեմն ոչ է
 հնար բազում ամս լինիլ: Եւ գիտելի է՝
 զի զանազանութի է ի մէջ այ և մարդոյս.
 վս զի ամ ինոյն իրս ամ է. և ինոյն
 իրս այսպիսի ինչ ամ. այս է, ինքն յին
 քեան է բնութեան. նմին իրի ոչ կարէ լի
 նիլ բազում ամ: Բայց մարդս ըստ այլ
 ինչ իրաց մարդ է. այսինքն, ըմբարդկու
 թէ. և վս այլ ինչ իրաց այսպիսի ինչ
 մարդ. այսինքն, սոկրատէս: Եւ մարդ
 կութիւն ինոյն իրս մարդ էր, և այս ինչ
 մարդ, ոչ կարէր յաշխարհիս բազում
 մարդ լինիլ: Տասներորդ՝ ասեն իմաս

տունքն • 'ի յարարածս գտանին չորս
 իրք • այսինքն, Բազմութիք: Լյարդ:
 Լ'նկատարութի: Լ'ճ շաղկապ: Լ'ւրա,
 քանչիւր ասացելովքս՝ հաստատի թէ
 մի միայն է սկիզբն: Այն առաջնոյն • զի
 գրեալ է 'ի գիրս Թւականութե արհես
 տի • զնոյն և գիտնէս իոս ասէ թէ՝ (ամ
 բազմութի 'իմիութե առնու զծնունդ:)
 Լ'պա ուրեմն հարկ է ամ բազմութե մի
 լինիլ սկիզբն • ուն արիստոտէլ ասէ թէ,
 (յամ սեռս իր ինչ գտեալ լինի, ուն զի
 ամ սեռն 'ինմանէ արտաբերի • նմին իրի
 յամ սեռս գտեալ մի առաջին պարզ,
 որ չափ լինի ամցն որ 'ինոյն սեռն կան:
 Որ օրինակ՝ 'ի կըշիւս կըշտորդն՝ որ
 չափ է ամցն: Լ'ճ 'ի թիւս՝ միակն • և 'ի
 սեռս որակութե՝ սպիտակն: Բայց ըս
 տեղծուածք՝ 'իմի սեռ միաբանին և կցոր
 դին • այսինքն, յէն • ապա ուրեմն պարտ
 է մի սկիզբն լինիլ պարզ՝ որնս զի ամ
 եակքս՝ 'ինմանէ արտաբերին • և այն ամ է:
 Այն երկրորդին ասեն • ամ կարգ ունի
 առաջին և վերջին • և որ առաջին և վեր
 ջին լինի՝ հարկ է զի ունիցի մի սկիզբն:

Այն երրորդին ասեն. ամանկատար 'ի
 յուսմենէ ամենեւին կատարելոյ ունի ըզ
 ծնունդ. և այս է ամ: Այն չորրորդին
 ասէ դիօնէսիոս. իբր շամիրակի իմ օ
 րինակաւ անցեալ է առաջին պատճառն
 ընդ ամ էսս. և ինոյն մնան. ապա ու
 րեմն մի է ամ: Մետասաներորդ՝ վասն
 զի էն և մին միապէս է. վասն զի զոր ինչ
 առաւել ունի զէն՝ առաւել ունի զմիու
 թին. և ամ է զմիութին իւր պահել ջա
 նայ: Այլ ընդդէմ է բաժանմանն էն. վս
 զի 'ի բաժանմանէն ապականի գոլ էին.
 և 'ի միութեն պահեալ լինի. իսկ ամ 'ի
 վեր քան զամ ունի զէութին. ապա ու
 րեմն 'ի վեր քան զամ ունի զմիութին:
 Այլ դիտելի է՝ զի միութին երեք աստի
 ճան ունի: Սախզի՝ իրն մի է ըստ սեռին.
 և այս անկատար միութի է: Արկրորդ՝
 իր ինչ մի է ըստ տեսակին. և այս միութի
 կատարեալ է քան զառաջինն: Արրորդ
 աստիճան է՝ որ մի է ըստ թուոյ և ան
 հատ մի է. և այս՝ քան զամ միութի կա
 տարեալ է. վս զի ոչ կարէ բաժանումն
 ընդունիլ. ապա ուրեմն պարտ է զի ամ
 մի


մի լինի. ոչ ըստ սեռի և տեսակի, այլ
միայն ըստ հատի: Երկոտասաներորդ,
վարդապետք ասեն թէ, յամ առաջնոր
դու թիւնս՝ այն որ գլուխ է կարգեալ,
պարտ է զի մի լիի. ոսյ անդամք՝ իմի
մարմինն մի գլուխ ունին. վս այն ասէ
արիստոտէլ թէ, ('ի մի առաջնորդու
թիւն՝ բազմուի առաջնորդացն չար է.
և մի տան՝ բազում տանուտէր չար է:)

Եւ յորժամ յամ աշխարհս այսպէս է,
ոսյ մի թագաւորութիւն, մի առաջնոր
դուի, հարկ է զի մի առաջնորդ և թա
գաւոր լինի. և այն է մի անձ: Ասան այն
արիստոտէլ 'ի գիրս իւր՝ 'ի վերջսն եզ
րակացուցանէ զբանն. ապա ուրեմն մի է
գլուխ անցն: Եւ յսքան առաջինն բնա
կան իրաց քննութե թէ մի է անձ:

Երկրորդ հաստատի 'իսք գրոց վկայ
ութի: Սախ՝ մովսէս գրէ յերկրորդ
օրէնս: (Լւր իէլ. Թր անձ քո Թր մի է:
Եւ 'ինոյն ասէ. տեսէք՝ զի ես եմ Թր
անձ միայն. և ոչ այլ ոք:) Եւ պօղոս յե
փեսացւոց ասէ. (մի է անձ. մի մրկրտու
թիւ. մի հաւատք:) Եւ վարդապետք




ասեն թէ, ամ կարի յոյժ մի է. ինքն
 նոյն միշտ. և մի կերպիւ. ոչ ինչ ունի
 յինքն բայց զինքն: Եւ ճշմարիտ մի է.
 զի ինքն թիւ ոչ ունի. և ոչ ինչ կայ 'ի
 նմա բաց յայնմանէ որ է է. վասն զի որ
 ինչ ամ է՝ ամ է: Բայց աստ չորս ինչ
 գիտելի է: 'Սախ և առաջին՝ թէ կարէ
 ոք ցուցանել թէ ամ ոչ է մի. վս զի մի
 անունս՝ բացարձակապէս իմանի որ ան
 կատար է. ուստի ոչ լինի ասել ամ. վս
 զի անկատար է: Ատառսխանի: Եւ եւթ
 թէ մին յարմար է ամ ասել. ու անմար
 մին. անճառ. անտես. զի ամ վս գերա
 զանցու թէն իւրոյ՝ 'իմէնջ անհաս մնայ.
 Բայց միայն բաց բարձական կոչմամբն:
 Եւ ու անմարմին կոչումն 'ի բաց բառ
 նայ զմարմինն զի է անմարմին. նոյնպէս
 և մի ասելն՝ 'ի բաց բառնայ զբաժանումն
 որ անկատար է: Եւ որքան անբաժանե
 լի է ինքն՝ կատարելագոյն է: Եւ կրորդ
 ոմանք ասացին թէ, յորժամ թիւ ան
 ճանն ամ ասացեալ լինի, ոչ ինչ մակադ
 րէ. այլ 'ի բաց բառնայ: Զոր օրինակ
 յորժամ ասեմք թէ մի է ամ, վս այն



մի ասեմք՝ թէ երեք անձն է. վս այն
 ասեմք՝ զի մի անձն ոչ է միայն. վս զի
 մինն՝ իմակադրականն նմանի՝ որ սկիզբն
 է թուոյ. և պատահումն է՝ ի տեսակ քա
 նակին: Եւ թէ մինն որ իմակադրա
 կանն նմանի՝ այ ասացեալ լինի, ի յամ
 թիւ և քանակ և պատահումն լինի. և այս
 սուտ է. նմին իրի ասացին թէ մինն որ
 այ ասի՝ միայն ի բաց բարձական անունն
 նմանի: Եւ աջինքն այսպէս ասացին:
 Բայց այժմու վարդապետքս՝ ամենեին
 ոչ հաւանին բանից նց. վս զի թէ մինն
 ի բաց բառնայ զբազումն, և բազումն ի
 բաց բառնայ զմինն, ապա ուրեմն իմէջ
 նց բոլորակ լինի. և այս անկատարելի է:
 Վս այն ասեն վարդապետք թէ, անուն
 թուոյ յորժամ այ ասացեալ լինի, ոչ
 միայն զբաց բարձականն ցուցանէ, այլև
 զմակադրականն: Չոր օրինակ յորժամ
 ասեմ թէ մի է ամ, ոչ միայն ցուցանէ
 թէ ամ բազում ոչ է, այլև զէութիւնն
 այ ցուցանէ: Եւ յորժամ ասեմ հայր մի
 է՝ զանձն հօր ցուցանէ: Եւ յորժամ ա
 սեմք թէ երեք անձն է, ոչ միայն բառ



նայ զմիութիւն անձինն. այլև ցուցանէ
զթիւ անձանց: Եւ պատասխանի տան
ընդդէմ առարկութեն նց ևասեն:
Մինն կրկին կերպիւ առեալ լինի:
Եւ յախ մի որ սկիզբն է թողոյ. որ տեսակ
քանակին է. և այս ոչ ասի նայ. վասն զի
քանակ և պատահումն ոչ տամք նայ:
Երկրորդ՝ ասի մի որ անդրադարձի է
ութեն. և այսպիսի մինս՝ նայ առաւել
ասի քան ալոց իրաց որոց է պատճառ:
Զի ասէ արիստոտէլ թէ՝ մինն որ անդ
րադարձի է ութին պատահումն ոչ ցու
ցանէ. այլ էութիւն: Եւ սահմանն մի է.
մի է որ յինքեան անբաժանելի է և այլ
մէ բաժանեալ. և էութիւնն նայ ըստ ին
քեան անբաժանելի է և յարարծոցս բա
ժանեալ: Եւ բաց յայ՝ ոչ ինչ է որ ոչ
կարեմք բաժանել մտօք. կամ՝ ներդոր
ծութիւն, կամ զօրութիւն: Եւ յլ ասեն վար
դապետք թէ, նիւթական թիւն որ տե
սակ է քանակին՝ և ամենևին թիւ կոչե
ցեալ լինի, ոչ ասի նայ. բայց տեսական
թիւ և հոգևորապէս որ ըստ մի կերպի
թիւ ասացեալ լինի, ասի նայ. ոչ իկող



մանէ բնուէն. այլ 'իկողմանէ անձանցն
 և առնջին : Երրորդ գիտելի է՝ զի իր
 ինչ ոչ լինի մի երեք օրինակաւ :
 յախ բազմուք ըստ այլևայլ տեսակաց .
 ունի հրեշտակք և աստեղք որք ոչ են մի :
 Երկրորդ՝ փոփոխամբ . ըստ այնմ որ մի
 մարդ բազում ասի . այժմ հիւանդ է .
 և երբեմն առողջ . երբեմն աղքատ . և եր
 բեմն հարուստ : Երրորդ՝ աճելու թիւ
 ըստ նոյն տեսակի . ունի մի մարդ բազում
 է յորդիսն վն ծնելոցն 'ի նմանէ :
 Ըստ երեք կերպս ի վն այ ոչ ասին :
 Բայց ճշմարիտ միութիւն՝ գտանի յամ
 չորս կերպիւն : Ը աջին՝ վն պարզուէ .
 որ ընդդէմ է առաջնոյն : Երկրորդն վն
 անփոփոխելի գոլոյն . որ է ընդդէմ երկ
 րորդին : Երրորդն վն անհատ գոլոյն .
 որ է ընդդէմ երրորդին . վն զի յորժամ
 ոք որդի ծնանի , զիւր էութիւն 'ի թիւ
 որդւոյն ոչ հաղորդէ . այլ է երկու էութիւն
 մի հօրն և մի որդւոյն : Չորրորդ՝ վն
 միութիւն արարածոցս նմանութիւն . զի ունի
 միութիւն ոչ յուսեք է ջլանէ . և ամ բազ
 մաւորութիւն 'ի միութիւն ելանէ :

Բայսպէս ան ոչ յուսեք է. այլ ամ ինչ
 'ինմանէ է: Դարձեալ՝ ունի միութի յին
 քենէ զմիութի ծնանի. այսպէս ան հայր
 յինքենէ ծնանի այլ զինքն. այսինքն,
 այլ նման ինքեան. կամ այլ յիւրմէ որ է
 որդի: Չորրորդ գիտելի է՝ զի անունս
 այս որ է անձ՝ երեք օրինակաւ ասի. այս
 ինքն, բնութ. որդեգրութ. և կոչմամբ:
 Սախ բնութք միայն այ ասի. իսկ որ
 դեգրութք սբց ասի. զի այ բարութեն
 կցորդ լինին. կամ շնորհօք նախատե
 սութեն. ունի մարգարէքն. կամ ուսմամբ.
 ունի վարդապետքն. կամ առաջնորդու
 թք. ունի եկեղեցւոյ առաջնորդք. կամ
 կարողութք և սքանչելագործութք ան
 անունեցան. ունի ասէ սաղմոսն. (ես ա
 սացի թէ անձք իցէք:) Երրորդ է՝ կոչ
 մամբ. ունի կոչի՝ որ միայն զանուն
 այ ունին. և ոչ զբնութի. վս զի ան ա
 նուն ոչ պատկանի նց: Բորդ՝ առաջինն
 որ է անձ՝ ոչ ունի անուն բազմաւորա
 կան ըստ ինքեան. քանզի մի է ճշմարիտ
 անձ. և ոչ անձութիւն առնու որոշումն:
 Իսկ երկրորդն և երրորդն բազմաւորա
 կան

ույ սխմնն կեսիսս և վէմ կոչի միայն պետ
 րսան։ Ը. Ե. որո նախ զընդդիմադրու թի
 նց տեսցուք. և զպատասխանին յարմա
 րեսցուք. և ապա զուղիղ տեսու թիւն ա
 ռաջի գիցուք։ Սախ հրեայքն բերեն
 վկայու թի յեկեցն որ ասէ։ (Լուր իւր
 ւոր ւած քո ւոր մի է) Եւ յերկրորդ օ
 րէնսն. (Ժաներուք և տեսէք զի ես եմ.
 և ոչ գոյ այլ ւած բաց յինէն) Պատաս
 խանեմ և ասեմ թէ՝ վկայու թիք հրեկցն
 վս միոյ ւածու թէն՝ նօքին հաստատեն
 Երրորդու թի գող զնոյն մի ւածու թիւն.
 վս զի այն որ ասէ. (ւոր ւած քո ւոր մի է.)
 երեք անգամ գնեւով զւորն և զւածն՝ ցու
 ցանէ զբազմու թի անձանց. իսկ մի ա
 սելն՝ զմի ետ թի և զքնու թի ւածու թէն.
 ույ ցուցաւ նախ. Սոյնպէս և ասելն (ոչ
 գոյ այլ ւած բաց յինէն) Ը. յլ ւած ոչ ա
 սէ զորդի և զհօգի. զի ինմանէ են, այլ
 զայնոսիկ՝ (որք անւնին բազում ւածք.
 եթէ ի յերկինս և եթէ յերկրի ըստ պօ
 ղոսի) ույ ասացաւ իսկերոյ։ Չայս և ե
 րեմիաս ասէ իդէմն որդւոյ թէ, (նա
 միայն է ւած. ընդ որում ոչ ոք համարես

95

յի

ցի այլ ամ. յիտայտորիկ՝ ի յերկրի երևես
 ցի. և ընդ մարդկան շրջեսցի: Եւ զայլ
 վկայութիւնս սբգ գրոց գիցուք յառաջի
 կայդ: Իսկ հետանոսք առարկեն:

Եւ յայսպէս. եթէ ծայրագոյն պար
 զութիւն ոչ կարօտանայ բազմութե. այլ և
 ամ աւելնին պարզ. վասն այն ոչ ունի
 բազմութիւն անձանց: Ըսեմք առ այս
 ըստ արիստօտէլի թէ, ոմ. չղչիկանն ոչ
 կարէ հայել՝ ի լոյս արեգականն. այսպէս
 մարդկային իմացումն ոչ կարէ հայել
 յամային լոյսն որ է անմատոյց: Եւ ոչ
 կարեմք հաստատել բանական լուսով
 գիտութե. այլ միայն լուսով հաւատոյն
 ի սբ գրոց առաջնորդեալք: Եւ զի նո
 քա ոչ ունին զլոյս հաւատոյ՝ և ոչ զսբ
 գիրս. վս այն ամ առարկութեք նց որ է
 ըստ բնական գիտութե, և ըստ զգալի
 իրաց, ոչ ինչ եզրակացուցանի յամ:

Եւ այս մին պատասխանիս բաւական է
 ամ առարկութեց նոցա. սակայն զի մի՛
 տգէտ երևեսցուք. տացուք պատասխա
 նի իւրաքանչիւրոյն՝ ի կարծոյ յաշխա
 տասիրութե ոմանց վարդապետաց:

Ըսեմք առաջին առարկութեան թէ,
ծայրագոյն պարզութիւն՝ է ընդդէմ
էութեան. և ոչ անձային անձանց. քանզի
անձային անձինքն են մի էութիւն ըստ
Թոճոյ:

Երկրորդ առարկեն թէ, միութիւն ան
ձինն՝ պարզագոյն է քան զբազմութի
անձանց. ապա ուրեմն որ առաւել պար
զագոյնն է, նոյ վայելէ:

Ըսեմք առայս. եթէ միութիւն անձինն՝
պարզագոյն է՝ խտեղծուածս, և ոչ ի
ստեղծողն. վս զի անձինք ստեղծուա
ծոց թէպէտ մի էութիւն են ըստ տեսա
կին. այլ ոչ ըստ Թոճոյ: Իսկ անձային
անձինքն՝ են մի և նոյն ըստ Թոճոյ. և
մի անձն ոչ ունի աւելի քան զերիսն.
և ոչ երեքն աւելի քան զմինն:

Երրորդ առարկեն. եթէ անձ ծընաւ
զանձ, կամ զինքն ծնաւ զանձ, կամ զայլս:
Եւ արդ՝ անկարելի է ումք ծնանիլ
զինքն. եթէ ծնանի ալ անձ, ապա ու
րեմն երկու են անձք:

Եւ այս պատասխանեմք թէ, ոչ հաւա
նիմք երկոցունց. զի թէ ասի անձ ծնաւ
97 Ի զինքն

զինքն ամ՝ իմացեալ լինէր թէ հայր
 ծնաւ զինքն հայր. վս զի յորժամ ա-
 սեմք թէ ամ ծնաւ զամ, ամն իմանի
 անդ ոչ վս բացարձակ էութեն, այլ
 վս անձինն հոր. որ ոչ ծնաւ զանձն
 իւր. այլ զանձն որդւոյ. նաև ոչ ծնաւ
 զայլ ամ. զի յորժամ ասեմք այլ ամ,
 այլն անդ ոչ ցուցանէ զանձն. այլ զէ
 ու թիւնն:

Չորրորդ առարկեն. թէ յամ է ծնունդ,
 ապա և ապականութի. զի ծնունդ մի-
 ոյն՝ ապականութիւն է միւսոյն. և այս
 գարշութիւն է յամ. ապա ուրեմն ոչ է
 յամ ծնունդ:

Ըստ այս ասեմք. եթէ յիմանալի ծնուն-
 դըն՝ ոչ է ապականութի և ոչ փոփոխումն
 ինչ. զի ոչ գոյ անդ նիւթ, որ ընդ գոլ
 միոյ տեսակին, ապականի միւսն:

Հինգերորդ առարկեն. ամ՝ որ ծնանի՝
 է ժամանակաւոր. քանզի ծնունդն՝ է
 փոփոխումն ինչ, յոչ էութիւն յէութիւն.
 այլ ամ է անփոփոխելի:

Ըսեմք առ այս թէ, ամային ծնունդն՝
 ոչ է ի ներքոյ ժամանակի. այլ յաւի

տենական. և ոչ երբէք զօրութիւն. այլ
միշտ ներգործութիւն:

Ահեքորդ առարկեն. զի ույ Պատրոս
մարդ է. Պաղոս մարդ է. և Յօնաննէս
մարդ է. ապա ուրեմն են երեք և ոչ մի:
Բայտ ասեմք թէ, ոչ է նման օրինա
կըդ. զի յորժամ ասի պատրոս մարդ է,
պաղոս մարդ է, ոչ է մի մարդկութիւն
ըստ թուոյ. այլ ըստ տեսակի:

Բայտ յորժամ ասի Տայր է ամ, Արդի
ամ, Տոգի ամ, յերեսինն մի է ամու
թիւն ըստ թուոյ: Բայտն առարկուի
հետանոսաց և ասքէլի. և պատասխանիք
նոցին իկարծոյ:

~~~~~

Զի ճշմարտ է Երրորդութիւն սբ:  
Գլուխ. Ժ:



Ո՞րտէ՞նք. Ե՛ւ Ե՛րկր

պագէաց նորա՝ հոգւով և ճշմար  
տութիւն պարտ է երկիրպագանել:

Զամօային անեղ էութիւն՝ երեք

անձինք և մի բնութիւն ուսուցին և դաւա  
նեցին ամ սբ գիրք ամաշունչք. և հո

գելից վարդապետք. վասն որոյ և մեզ  
պարտ է զնոյն պաշտել և երկիրպագա  
նել: Զի որ կարօտանայ աչաց՝ պարտի  
հաճատալ տեսողաց զանազան գոյնս:

Եւ խուլն պարտի հաճատալ թէ, գոյ  
բաղյոր եղանակ ձայնից: Եւ այս վասն  
երկու պատճառի: Սախլի թէպէտ զմի  
զգայու թիւն ոչ ունի, այլ զչորս զգայ  
ուիւն ունի. որով հմտանայ՝ իզգալիսս:  
Երկրորդ՝ զի բազումք են որք վկայեն՝  
որք ունին զամ զգայութիւն կատարեալ:  
Եւ պառւերմն որք ոչ ունին սրատես աչս,  
պարտ է հաճատալ տեսողացն. նոյնպէս  
մեք որք կուրացեալ եմք մեղօք, պար  
տիմք հաճատալ սք առաքելոցն և մար  
գարէից. և անժաբան վարդապետաց.

զի նոքա են հոգևոր տեսողք:

Եւ զոր օրինակ՝ թէ մանուկ մի ծնեալ  
իցէ՝ իխաճարչտին տեղւոջ, և թէպէտ  
չէ տեսեալ զարեգակն և զլուսին, պար  
տի հաճատալ թէ գոյ արեգակն և լու  
սին: Սմանապէս մարդիկ որք ծնեալ  
են՝ իմէջ խաճարի մեղաց և անգիտուէ,  
պարտին հաճատալ սրբոցն և բարի ա-

րանց. որոց ամ զինքն յայտնեաց:  
Ոյ ասաց Թրն առաքելոցն. (զամ զոր  
լուայ 'իհօրէ իմէ, ծանուցի ձեզ. և  
դուք վկայեցիք վս իմ: ) Եւ նիկողի  
մոս եկեալ առ յս ասէ. (գիտեմք զի յայ  
եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ  
զայդ նշանդ առնել զոր դուդ առնես,  
եթէ ոչ իցէ ամ ընդ նմա: )

Յայս բանս՝ յիշէ զսբ երրորդութիւն:  
Ըյնու որ ասէ յայ՝ զհայր ամ անուա  
նէ. և զեկեալն Որդի. և ամ իցէ ընդ  
նմա՝ զհօգին սբ դործակից:

Եւ դարձեալ յիշէ զերրորդութիւն սբ  
այնու որ ասէ. (որ ոչ ծնցի 'իջրոյ և 'ի  
հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն  
այ. նոյնպէս և ամ ծնեալն 'ի հոգւոյն: )

Եւ յայլ ուր ասէ. (մըլրտեցէք զնս յա  
նուն հօր և որդւոյ և հոգւոյն սբ: )

Եւ աստ ասէ. (հոգի է ամ: ) Ըյսինքն,  
թէ ամութիւն՝ է հայր և որդի և հոգի  
սբ: Եւ այսպէս բազումք են վկայութիւնք  
վս որդւոյն այ՝ 'ինոր կտակարանացս:

Զոր յետոյ կարդեսցուք: Բայց զի ոչ  
մանք ոչ հաւատան աւետարանին սբ,



Լառաքելոյն քսի: Ասորոյ Ժողովեմ  
զվկայութիս 'իմարդարեից սրբոց. որ  
հաշանելի է նոյունց. և ոչ իշխեն ասել  
ընդդէմ ինչ:

Երդ՝ վս ամենասբ Երրորդութե՛ 'ի  
յերից վկայութեց ունիմք հաստա  
տեալ: Սախ՝ յաժաշունչ դրոց մարդա  
րեից: Երկրորդ՝ յարտաքին իմաստասի  
րաց: Երրորդ՝ յաժաբան վարդապե  
տաց և յօրինակաց:

Տնոցութեալ զառաջինն յաժաշունչ դրոց:  
Սախ Մովսէս ասէ. ('իսկզբանէ ա  
րար աժ զերկինս և զերկեր: ) Բ. յսինքն,  
հայր. (և ասաց աժ. եղիցի լոյս.) այս  
ինքն, Որդի. (և հօգի այ շրջեր ի վր  
ջուրց:)

Դարձեալ՝ իսկ, հայր. բան, Որդի.  
է, հօգին սբ: (Եւ ասաց աժ. ա  
րասցութեալ մարդ ըստ պատկերի մերում.  
և ըստ նմանութե: ) Եւ ասէ աժ. (ահա  
եղև ադամ իբրև զմի 'իմէնջ: ) Եւ ասէ  
նոյ. (օրհնեալ տր աժ աժ սեմայ: )

Եւ վս աշտարակին ասէր: (Եկայք իջ  
ցութեալ և խառնակեսցութեալ զլեզուս շինո  
ղայ: )

Եւ արահամու առ կաղնեաւն մամբ  
րէի երեւցաւ ւնծ: (Ետես ևահա արք  
երեք կային 'ի վերոյ քան զնա:)

Չերեք անձնաւորութիւն հաւատս ցու  
ցանէ: Չկնի այսմ ասէ դիրն թէ. (տե  
ղեաց 'իմնէ հուր և ծծումբ 'ի սողում:)

Ի արձեալ երեք անձնաւորութիւն յայս  
մանէ յայտէ՝ զի ասաց հրեշտակն 'ի զե  
նումն իսահակայ: (Յանձն իմ երդ  
նում ասէ փր:)

Եւ զորդւոյ ասէ դաւիթ առ ւնծ հայր  
թէ, (քո է բազուկ և զօրութի:)

Եւ պօղոս մեկնէ (քս է ւն զօրութի:)

Եւ եդիպտացիքն ասացին վն հարուա  
ծին թէ, (մատն ւն է այս.) որ նշանա  
կէ զհոգին ւն. զոր քս ասաց յաւետա  
րանին թէ, (մաթմբն ւն հանեմ զդէս:)

Եւ դ' անձն և բազուկն և մատն որք զա  
նազանեալ են անոճամբ և բաժանեալ  
մասամբ, զերեք անձնաւորութիւն յայտ  
առնեն: Եւ առ մովսէս ասաց: (Ես եմ  
ւնծ. ւնծ Բարահամու. և ւնծ Իսահա  
կայ. և ւնծ Յակօբայ:) Եւ դարձեալ  
ասէ մովսէս: (Լուր ի էլ փր ւնծ քո՝ փր  
մի է:)

Լըրիցս Թոր՝ զերեք անձնաւորութիւնն  
ասէ. և մի վն միոյ էութեն: Դարձեալ  
մովսէս ասաց շինել երեք քաղաք ապաս  
տանի՝ միաջափ հեռի իմիմեանց:

Եւ դարձեալ մովսէս խրատէ թէ, (հայ  
եաց ի քեզ.) այսինքն, զի պատկեր ես եր  
րորդութեն: Եւ յսքան իմովսիսէ վկայ  
ու թիք չորեքտասան թռչով:


Երկրորդ՝ Դաւիթ ասէ իսաղմոսն:  
(Կենդանի է Թոր և օրհնեալ է Թոր.  
և բարձր եղիցի Թոր փրկութե իմոյ:)

Դարձեալ (Ողորմութե Թոր լի եղև եր  
կիր. և բանիւ Թոր երկինք հաստատե  
ցան. և հողուով բերանոյ նորա՝ ամ զօ  
րութե նոյն:)


Եւ դարձեալ (Չայն Թոր  
ի վր ջուրոյ.) որ եղև ձայն հօր ի յոր  
դանան: (Եւ Թոր փառաց որոտաց.) որ  
է հողին: (Եւ Թոր ինքն ի վերայ ջուրոյ  
բազմաց.) այսինքն, որդին մրկտեալ:

Դարձեալ ասէ: (Եւ Թոր Թոր խօսե  
ցաւ. և կոչեաց զերկիր. յարևելից:)

Եւ դարձեալ ( ) րհնեաց զմեզ Թոր Թոր  
մեր. Թոր մեր օրհնեաց զմեզ: Դարձել  
(ի քեզն է Թոր աղբիւր կենաց.) որ է հո  
գին



գինն սբ քղխումն 'ի հօրէ: (Եւ լուսով  
 երեսաց քոց տեսանեմք զլոյս:) Լոյս ե-  
 րեսացն հօր՝ որդին է. և զլոյս հօգինն սբ:  
 Դարձեալ ասէ: (Բաւաքեա՛ւ մօր զլոյս  
 քո. և զճշմարտութի քո. զի առաջնոր  
 դեսցեն ինձ:) Եւ դարձեալ. (Յայ է զօ-  
 րութի իմ, և քո մօր ողորմութի. և դու  
 հատուցանես ըստ գործոց նոց:) Եւ այլ  
 ևս: (Վհո է բազուկ և քո է զօրութի.  
 զօրացի աջ քո և բարձր եղիցի ձեռն  
 քո:) Եւ դարձեալ. (Բ. ջ մօն արար զօ-  
 րութի. Բ. ջ մօն բարձր արար զիս. և  
 Բ. ջ մօն արար ինձ զզօրութի:) Եւ ևս.  
 (Մեծ է մօր.) այսինքն, հայր. (և մեծ է  
 զօրութիւն նր.) այսինքն, Որդի. (զի  
 քն այ զօրութի.) և իմաստութե նր.  
 այսինքն, հօգւոյն սբ նր ոչ գոյ չափ:  
 Եւ այլ ևս երեք փոխն մօր երկնիցի 'ի  
 դեմս երրորդուէն ասացեալ. այսինքն,  
 Օրհնեցէք զմօր յերկնից՝ զհայր:  
 Օրհնեցէք զմօր յօրհնութիւննոր՝ զՈրդին  
 Օրհնեցէք զմեծ 'իսրբութե նր՝ զհօգինն  
 սբ: Եւ յայլ ուր ասէ: (Տր ասաց ցիս  
 որդի իմես դու՝ և ես այսօր ծնայ զքեզ:)




Եւ յայլ ուր: (Նա կարդասցէ առ իս  
 հայր իմ ես դու: ) Եւ դարձեալ ասէ:  
 (Բայց մոր ցմոր իմ նիստ ընթացի իմմէ: )  
 Եւ դարձել: (Յարգանդէ յառաջ քան  
 զարուսեակ ծնայ զքեզ: ) Եւ այլ ևս:  
 (Ընդ քեզ է սկիզբն աւուրն զօրուհի: )  
 Եւ ևս: (Յառաջ քան զարե է անուն նր: )  
 Եւ ինա օրհնեսցին մամ ազգք երկրի:  
 Եւ լցցի փառօք նր մամ երկիր: )  
 Եւս ասէ: (Բղխեսցէ սիրտ իմ զբան բա  
 րի. և ասացից զգործս իմ: ) Եւ այլ ևս:  
 (Այս օրիկ էօծ զքեզ մծ մծ քո ու  
 րախու թէ իւղով: ) Եւ յայլ ուր:  
 (Երդունաւ մոր, թէ դու ես քահանայ.  
 և մոր ընդաջմէ քու մմէ: ) Եւ դարձեալ  
 ասէ: (Յո՞ երթայց ես յողոյ քումմէ.  
 կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց: )  
 Դարձեալ ասէ: (Հոգի քո բարի առաջ  
 նորդեսցէ ինձ. վս աւուրն քո մոր: )  
 Եւ յսոքիկ վկայու թիք իսաղմոսէն քսան  
 և երկու թռչով:  
 Եւ րորդ՝ Սողոմոն ասէ յառակացն:  
 (Որդի եմ ես հօր իմոյ. միայն միա  
 ծին յառաջ քան զմայր իմ: Եւ նախ





քան զամբ լերինս և բարս ծնաւ զիս։  
Եւ յորժամ հաստատէր զամբ, ևս ընդ  
նմա էի համապատշաճեալ։) Եւ դար  
ձեալ ասէ։ (Բժ իմաստութեմ հիմունս  
եարկ երկրի. և հանձարով իւրով զան  
դունդս պատառեաց։) Եւ դարձեալ  
ասէ։ (Բժեհեցուն ճարտարապետն ու  
սոյց ինձ իմաստութեմ. զի գոյ՝ ինմա հո  
գի սբ միածին.) և այլն ըստ կարգի։  
Դարձեալ ասէ։ (Երեք են զոր դժոճա  
րին է ինձ իմանալ։) Եւ դարձեալ։  
(Բաասան երեք կղի ոչ դիւրաւ խզես  
ցի։) Եւ յայլ ուր ասէ։ (Զինչ անուն է  
նր և զինչ անուն որդւոյ նր։) Բայտքիկ  
իսողովունէ վկայութեմ ութն թոճով։  
Որրորդ՝ Եսայի ասէ։ (Սբ սբ սբ  
մոր զօրութեց։) Երիցս սբ ասելովն՝  
յայտնէ զերեք անձինսն. և մի մոր՝ զբը  
նունն։ Բայլ վեց թեւեան սերովբէքն՝  
վեց թեւքն իւրեանց զայս մեզ ուսու  
ցին։ Երկուքն ծածկէին զգլուխս իւ  
րեանց թէ, անսկիզբն է անձ։ Երկու թե  
ւքն ծածկէին զոտս թէ, անվախճան է։  
Եւ միջին երկու թեւքն՝ իմանալ զերեք  
անձ



անձնաւորութիւն և զմի անձութիւն:

Եւ դարձեալ ասէ: (Չգեաց զերկինս  
ոպ խորան. և երեք մատամբ՝ կախեաց  
զերկիր: ) Դարձեալ ասէ: (Ըհաւասիկ  
անձ մեր. ահաւասիկ անձ անձ դայ զօրու  
թիւ իւրով: )

Եւ դիմաց մարդացելոյն  
ասէ: (Տը անձ առաքել զիս և հոգի նր: )

Դարձեալ ասէ: (Դու անձ հայր մեր.  
և յաւիտենից է անուն քո: )

Եւ վս հոգ  
ւոյն ասէ: (Բղիսեցէ դաւազան յարմա  
տոյն յետեայ. և հանգիցէ ի վր նր հո

գի այ. հոգի իմաստութե և հանձարոյ.  
հոգի դիտութե և անպաշտութե. և լցցէ

զնա հոգի երկիւղի այ: ) Դարձեալ աս  
է: (հոգի ան ի վր իմ. վս որոյ և էօծ

իսկ զիս. ) և այլն: Եւ դարձեալ ասէ:  
(հոգի յինէն ելցէ. և զամ շունչ ես ա

րարի: ) Եւ առ ի էլ ասէ թէ, (ես և հո  
գի իմ և բանն իմ՝ իմիջի քում: )

Եւ դարձել ասէ: (Ես որ ամայն ծնունդ  
շնորհեմ, մի թէ ես ոչ ծնանիցիմ ասէ

անձ ամենակալ: )

Ըստքիկ՝ ի յետայեայ վկայութե տան  
և մէկ թողով:

Դինգերորդ՝ յերկոտասան մարդարէսն  
 Ընդէաս ասէ: (Ըսեմ եւբանն իմ. և  
 հոգին՝ իմիջի ձերում ասէ իմ ամենա  
 կալ: ) և Միքիաս ասէ թէ, (Տունն իւրի  
 բարկացոյց զհոգին իմն: ) և Չաքարիաս  
 ասէ: (Սաստեսցէ իքեզ իմ: ) և Երեմի  
 աս ասէ: (Հոգի երեսաց մերոց իմ քս.  
 ի յերկրի երեւցաւ և ըմարդկան շրջե  
 ցաւ: ) և Սվտէ ասէ: (Հոգի անձեղէն որ  
 արար զամ: ) և Կրիանիէլ ասաց թագա  
 շորն: (Հոգի այդոյ իքեզ: ) Եւ վս  
 որդւոյն ասէ: (Սէ երեք արքարկան  
 իննոցն. և չորրորդն նման է որդւոյն այ: )  
 Եւ դարձեալ ասէ: (Հին աւուրցն նըս  
 տաւ որ է հայր. և ինա եկն որդին այ.  
 և թագաւորութիւնն թագաւորութիւն  
 յաւիտենից որ ոչ անցանէ: ) Ըյստֆիկ  
 և սառաւել քան զայսոսիկ ինք գրոց  
 վկայութիւն են վս սբ երրորդութեն որ  
 ժողովեցաւ վաթսուն և երկու թունով:  
 Տեսցուք զերկրորդն յարտաքին իմաս  
 տասիրաց. զոր առեալ ինննէ վար  
 դապետք՝ հաստատեն այսպէս:  
 Սախ բնութիւն բարւոյն է հաղորդել  
 զինքն

զինքն այլոց. և որչափ առաջել բարի է՝  
առաջել հաղորդէ զինքն: Եւ զի անձ է  
բովանդակ բարի. ապա ուրեմն բոլորո  
վին հաղորդէ զինքն: Եւ զի ոչ ոք ըս  
տեղծուած է անչափ ոմ զանձ. վս այնո  
րիկ հարկ է ասել այ որդի ունիլ. որոյ  
և հաղորդեսցէ զինքն բոլորովին:

Երկրորդ՝ պատուական և լաւագոյն է  
այն՝ որ բարի է և ծնանի գբարին. և ան  
վախճան՝ որ բղխէ զանվախճանն. քան  
զայն որ միայն բարի է և անվախճան.  
ապա թէ ոչ՝ զօրութիւնն պատուական  
գոյր քան զներգործութին: Եւ անձ է  
պատուական և լաւագոյն քան զամ է.  
ապա ուրեմն յառաջ եւ ձ յինքենէ զան  
վախճան բարին որ է անձ: Երրորդ՝ ամ  
ստեղծուած քս չափաւորք են. և ամենե  
քեան որք կան՝ ինս՝ չափաւորք են:

Սոյնպէս անձ որ անչափ է՝ ամ որ կայ  
ինա՝ անչափ է: Եւ անձ ունի իմացումն  
և կեանք. այսոմս այ իմացումն և կեանքն՝  
անչափ են. վս այնորիկ և զանձն կայա  
ցուցանեն: Չորրորդ՝ յաւիտեանական  
և անհուն ներգործութին՝ ներգործէ

անհուն և յաճիտենական. ապա թէ ոչ՝  
ոչ լինէր զուտ ներգործութի. ապա ու  
րեմն ներգործէ զյաճիտենական և զան  
հուն բարին: Հինգերորդ՝ յայտնի է.  
զի ամ ունի իմացումն և կամք. և որոյս  
իմանալով զինքն՝ ծնանի զբանն յինքե  
նէ. այսպէս կամելով զինքն՝ բղխէ զհո  
գին սբ: Ահեքորդ՝ ույ՝ իմէջ ամ էու  
թէց մի է նախկին էութի. այսպէս ի  
մէջ ամ շարժմանց՝ մի է նախկին շար  
ժումն: Եւ զի ծնունդն է շարժումն.  
վս այնորիկ ամ որ է ամենեին նախկին  
էութի, ունի երկու ելումն. մինն բանա  
կան որ է իմացումն իւր. և մինն կամա  
նորական որ է կամելն իւր. և այսպէս  
որդին է իմաստութի հօր. և հոգին սբ  
կամք նորին. և այս նոյն է որոյս յառաջ  
ասացաւ: Եւ թներորդ՝ ամ որ կարգ ու  
նի՝ պարտ է զի լինիցի առաջին. միջին  
և վերջին: Եւ ամ կարգ ունի. ույ՝ ասէ  
արիստոտէլ թէ, (ամ զամ կարգ ունի  
զոր երեք թռչով պաշտելի է: ) Եւ թնե  
րորդ՝ ամ իր անհատ՝ մարմին թէ անմար  
մին, ունի էութի. և զօրութի. և ներ



Գործութիւն: Եւ զի խոստովանեալ գոյ  
 և է ամ. ապա ուրեմն և գործութիւն իւր է  
 որդին. և ներգործութիւն հոգին սբ:  
 Ըլ և ամ մարմին է եռակի տարրորդ.  
 այսինքն, երկայն և լայն և խոր. օրինակ  
 դիր զտունն. յորոց զմինն բառնալ ան  
 հնար է. զի ոչ մնայ մարդկան մարմին:  
 Իննեբորդ՝ անկատար հայրն՝ կարէ կա  
 տարեալ որդիս ծնանիլ. ուն կոյր հայրն  
 աչքաւոր որդի ծընանի: Եւ թեպէտ  
 մարդն ոչ առնու կատարելութիւն իծը  
 նունդն որդւոյ իւրոյ. սակայն՝ իկատա  
 րելութիւն մարդոյն է ծնանիլ զնման իւր:  
 Եւ ամ կատարելութիւն պարտ է լինիլ  
 ի յամ. վս այն ասէ յեսայի. (ես որ  
 ամցն ծնունդ շնորհեմ. մի թէ ես ոչ  
 ծնանիցիմ ասէ տօր:) Տասնեբորդ՝ հրեշ  
 տակք և մարդիկ են պատուական էութիւնք.  
 և ունին բան և կենդանութիւն. և  
 զրկեալն՝ ինցնէ է անբան և անկենդան.  
 որոնք քար և որոնք կուռքն որք ամ կոչին՝  
 անբան և անկենդանիք են: Ըլ և ամ է  
 պատուական էութիւն. և ունի բան և կեն  
 դանութիւն որ է որդին և հոգին սբ:

Ի՛շ ի՛վն ամի պղատոն կրնքէ ասելով.  
(ոպ զհայրն՝ և զարարիչն իմանալն դրժ-  
ւարին է և պատմելն անկարելի:)

Ի՛շ թէ ասէ հակառակն ունի ամ բան.  
այլ արարած է և ոչ ծնունդ:

Ը. այս ասեմ թէ, յայսմանէ՝ է չորս  
թիւրութի: Սախլի՝ որպէս մեր բանս  
ծնունդ է մեր մրտացս և ոչ արարած.  
նոյնպէս և այն: Երկրորդ՝ զի մինչ ա-  
րար զբանս՝ անբան էր: Երրորդ՝ զի  
մասն մի արարած լինի այ. և մասն մի  
արարիչ: Չորրորդ՝ զի բանն՝ իբնուէ է.  
և թէ բանն արարած է, և բնութիւնն նր  
արարած է: Ի՛շ դարձեալ ասեն հակա-  
ռակք. թէ բանն այ և հոգին անձն է  
'ի յամ, ապա բազում անձինք են 'ի  
յամ և ոչ երեք. զի ամ ունի բան. և տե-  
սողութի. և լսողութի. և զօրութի. և  
ներգործութի. և յաշիտէնականութի.  
քաղցրութի. և բարութի. և այլն:

Ը. եմք առ այս: Սախ թէ՝ սոքա ասա-  
ցեալքս տեսողութի, լսողութի, և զօ-  
րութիւն և այլն, ոչ հային 'ին երբս 'ի  
յինքն. այլ արտաքս 'ի յարարածս. մն

որոյ ոչ են անձինք: Ը, յւ բան և հոգին՝  
է՛ ինեքքս ի յինքեան. վս որոյ անձ  
նաւորութիք են: Դարձեալ ասացեալքս  
ամ՝ բարութի, զօրութի, քաղցրութի,  
և այլն, վերաբերին յերեք անձինսն ույ  
ցուցաւ յառաջագոյն: Ը, յս երկրորդ  
գլուխն:

Տեսցուք զերրորդն յածաբան վարդա  
պետաց՝ որք հաստատեն զերրորդու  
թիւն իմիտս մեր բազում օրինակաւ:  
Սախ՝ ույ արեգակն ունի բոլորակութի  
և լոյս և ջերմութի իւր. այսպէս հայր  
և որդի և հոգին սբ՝ հաւասարք են մի  
մեանց: Կամ ույ յարեգականէն՝ երկու  
լոյսք ի յառաջ դան. այսինքն, դեղին  
և սպիտակ լոյսն. այսպէս որդին և հո  
գին սբ ի հօրէ: Կամ ույ երեք լոյս ի  
մի խառնեալ լապտեր: Երկրորդ օրի  
նակ՝ ասեն վարդապետք. մարդն որ է  
պատկեր այ՝ մի է հօգւով և մարմնով և  
բանիւ. թէ հօգի չունի, մեռած է. թէ  
բան չունի, մունջ է: Երրորդ օրինակ.  
ույ ադամ և ևա. և սէթ ինցնէ. մինն  
ծնունդ. և մինն ոչ. և մի է բնութի երիցն:

Զորրորդ՝ ույ բանական հոգի մարդոյս՝  
 ունի միտք. և կամք. և իշողական. որք  
 են երեք զորութիւնք և մի էութիւն:  
 Սոյնպէս յերրորդութիւնսն սբ՝ մի է ան-  
 ութի. և երեք անձինք: Եւ դարձեալ  
 միտք և իմացումն և կամքն՝ մի են բնու-  
 թք և երեք յատկութիւնք: Հինգերորդ օ-  
 րինակ. ույ խնժորն երեք որակութի-  
 ունի. այսինքն, համ և հոտ և գոյն. և  
 երեք զգայութիւն ճանաչի: Եւ դարձեալ  
 օրինակ. ույ հուրն և լոյսն և ջերմութիւն  
 իւր: Եւ ույ կերպիւն ինչ բաժանի՝ ի  
 հրոյն. այսինքն, յորժամ ջուրն ջերմա-  
 նայ. սակայն ջերմութիւն այնպէս մնայ  
 ի հուրն. նոյնպէս և հոտ խնժորին բա-  
 ժանիլ անկար է: Եւ յայտն որդին այ՝  
 միայն մարդացաւ և ծնաւ ի սբ անձաժ-  
 նէն աննուազ մնալով ընդաջմէ հօր այ:  
 Աւերորդ օրինակ. հոգին և բանն և  
 շունչն մի են և երեք. բանն ծնունդ. և  
 շունչն բղիւսմն ի հոգւոյն: Եւ օթներորդ՝  
 ույ մի է մարմինն և ձեռն և մատն. և երե-  
 քեանս զմի բնութիւն ունին. այլ երեք  
 յատկութիւնք: Աւերորդ՝ ույ մի բնու-  
 թիւն

Թի են ջրոյ . ծով . և գետ . և աղբիւրք :  
 Իննեքորդ . մի է արմատն և ծառն և սլը  
 տուղն . և դարձեալ մի է ծաղիկն և գոյնն  
 և հոտն 'ինմանէ : Տասնեքորդ օրինակ .  
 ամ է ութի մարմին թէ անմարմին՝ ունի  
 բնութի և զօրութի և ներգործութի .  
 և դարձեալ ունի է ութի գեղեցկութի  
 և բարութի : Եւ այլ բազում ինչ օրի  
 նակ տան վարդապետք սբ երրորդութի  
 էն իբրնեցուկ տկար մտաց մարդկան :  
 Եւ նա ինքն է անօրինակ և աննման և  
 'ի վեր քան զամ եղեալս . ինքն ինքեան  
 միայն է նման . և որդին միածին և հոգին  
 սբ : Եւ թէ ոք ասիցէ ընդդէմ . (չիք  
 ոք բարի՝ բայց մի ամ ասէ աւետարանն :)  
 Եւ առաքեալն յառաջին կորնթացւոց  
 ասէ . (մեզ մի է ամ հայր յորմէ ամ :)  
 Եւ եմք առ այս եթէ , ասելն մի ամ՝ զոր  
 դին և զհոգին սբ ոչ 'իբաց օրոշէ :  
 Սախղի 'իմիոյն այ է որդին և հոգին  
 սբ : Եւ դարձեալ՝ ոմ ամ է հայր՝ ամ  
 է և որդին . ամ է և հոգին սբ : Եւ մի  
 ասելն՝ չորս կերպիւ իմացուքն ունի :  
 Սախ մի ասեն զամ ընդդէմ բազում



աստուծոցն կուոյ որք չեն անօր  
 թիւ, և ոչ ներգործութիւն. (եթէ յերկինս  
 և եթէ յերկրի:) Երրորդ՝ մի է անօր  
 նութիւն. զօրութիւն. փառօք. և իշխանութիւն  
 թիւ. թէպէտ երեք են անձինք ըստ յա  
 տուկ դիմաց: Երրորդ՝ մի է ընթացն.  
 ուն արեգակն մի է թոռնով. և ոչ երեք  
 թիւ ըստ երեք անձանց. որպէս երեք  
 մարդ երեք անձինք են և երեք թիւ:  
 Բայց երրորդութիւն՝ երեք անձինք  
 են և մի թիւ. մի անօր և մի թագաւոր:  
 Երրորդ՝ մի հայր մի որդի և մի հոգի.  
 զի մի է հայր՝ պատճառ որդւոյ ծննդ  
 դեան և հոգւոյ բոլորման. և մի որդի և  
 ոչ երկու. թէպէտ որդի և հոգի՝ իհո  
 րէն. և մի հոգի անփոփոխ՝ զի ոչ փո  
 փոխի ի հայր կամ յորդի: Եւ այսպէս  
 երրորդութիւն անօր մի է և երեք. երեք  
 և մի՝ ի վեր քան զփառ և զբան հրեշտա  
 կաց և մարդկան. ինքն ինքեան միայն  
 դիտելի և մեզ հաւատալի՝ ինք դրոց և  
 յօրինակաց. և ոչ քննելի. զի քննելն  
 յանդգնութիւն է. և հաւատալն փրկութիւն.  
 և ճանաչելն կեանք յաւիտենական:

ԸՆԴԴԷՏ արեան: ԳԼՈՒԽ. ԺԼ:

118

ԼՅԷ այս է արքունի ճանապարհն ուղղա  
փառութե. որմիս ուսուցին հարքն սբ  
զերրորդութիւն մի բնութիւն. և մի կամք.  
մի ներգործութիւն. մի թագաւորութիւն.

և զայլսն նմ միութիւն խոստովանել:

Եւ զդէմսն ոչ շփութիւ. այսինքն, զե  
րեք անձինս առանց խառնակութե պա  
հել և խոստովանել:

**Բ**եր տեսցուք նախ զգայթակղութիւ  
արիօսի և զպատասխանիս նր. և ա  
յա զճշմարտութիւն հաստատեսցուք:  
Եւ աջին գայթակղութիւն արիօսի որ  
ասէ սողումն ի դէմս քսի: (Տր ստացաւ  
զիս սկիզբն ճանապարհաց իւրոց յամ  
գործս իւր: ) ԼՅԷ դարձեալ սիրաք ա  
սէ. ( ի սկզբանէ և յառաջ քան զյաւի  
տեանս ստեղծեալ եղէ: ) ԼՅԷ նախ պա  
տասխանեսցուք ընդդիմութեց երեք է  
զանակաւ: Սախզի՝ ոչ իմանի անդ զի  
մաստութեւն որ է որդի այ. այլ զիմաս  
տութեւն զոր տայ նա ընտրելոց իւրոց.  
ոպ ասէ սիրաք. (նա ստեղծեաց զիմաս  
տութիւն հոգւով սբւ. և եհեղ զնա ի վր  
նամ գործոց իւրոց: )

Երրորդ՝ իմանամք ի վր մարդեղութեն  
 քսի. ուն ասէ յօհաննէս. (բանն մարմին  
 եղև:) Չի որոյս որդին նոյ ասի չարչա  
 րեալ և մեռեալ որ վն միաւորելոյն ի  
 մարմնի: Եւ յսպէս և ասի եղեալ վն լինե  
 լոյն մարմին. վն որոյ ասէ սիրաք:  
 (Եւկզբանէ և յառաջ քան զյաւիժնս  
 ստեղծեալ եղէ:) այսինքն, նախասահ  
 մանեալ եղէ միանալ ընդ ստեղծւածոյ:  
 Երրորդ՝ զի ասացն թէ, (տր ստացաւ  
 զիս.) ասաց թէ, (նախ քան զամ բլուրս  
 ծնաւ զիս:) Չի այսոքիւք յատկացի  
 կերպ նոյն ծննդեանն յեղականաց:  
 Չի իծնունդս որ առ մեզ՝ այլայլի ծը  
 նողն. իսկ իստեղծմանն ընդդէմ այսմ,  
 այլայլի ստեղծուածն: Երդ՝ ասի որդի  
 ստեղծեալ և ծնեալ. զի իստեղծմանէն  
 երևի անսխալութիւն հօրն. և իծննդե  
 նէն միւլ թիւն բնութեն հօր և որդւոյ:  
 Եւ յԺմ տեսցուք սակաւ ինչ վկայութի  
 ւնք դրոց: Չի նոյն և արարչակից  
 նորին բանն ծնեալ ի հօրէ: Սախզի՝ ա  
 նուն որդիութե յատուկ և ճշմարիտ այնմ  
 պատշաճի՝ որ ծնանի ի գոյացութե նո  
 րին.

րին. Թէպէտ և ասի այլ կերպիւ որդի.  
 ոյ աշակերտք և հոգաբարձութ. այլ  
 վս նմանութի է և ոչ ճշմարտութի:  
 Ը. Եւ յօհաննէս 'ի կաթուղիկէն ասէ.  
 (եմք 'ի ճշմարտի որդւոյ նր. յնի քնի.  
 զի նա է ճշմարիտ ամ և կեանք յաշիտե  
 նական:) Եւ զի է յեութի ծնողին. վս  
 այնորիկ և է ճշմարիտ ամ: Երկրորդ.  
 ոչ ինչ ստեղծուած կարէ լինիլ հաւա  
 սար ալ. և ոչ կերպարան նորին: Ը. Եւ  
 փիլիպպեցւոցն ասէ. (որ 'ի կերպարանս  
 ալ էր, և հաւասար ալ, զկերպարանս  
 ծառայի էառ:) Եւ յօհաննէս ասէ.  
 (հայր իւր կոչէր զամ. և հաւասար առ  
 նէր զանձն ալ:) Երրորդ. ոչ ոք ստեղծ  
 ւած կարէ ստեղծանել. զի 'ի ստեղծա  
 նելն՝ ինդրի անհուն զօրութի. զի ըս  
 տեղծանելն է առնել ինչ 'ի յօջնչէ. և  
 'ի սէջ ոչնչին և իրին՝ է անհուն հեռա  
 ճորութի: Իսկ վս որդւոյ ասէ աւետա  
 րանիչն: ('Իսկ զբանէ էր բանն. և բանն  
 էր առ ամ.) և ի վր եբեր. (ամ ինչ նո  
 վաւ եղև:) Եւ պօղոս 'ի կողոսացւոց ա  
 սէ. (ամ ինչ նովաւ հաստատեցաւ. որ



ինչ յերկինս և որ ինչ յերկրի. որք երև  
 ին՝ և որք ոչն երևին. թէ արթողք՝ թէ  
 պետութիւք և այլն:) ԸՅԼ Թերևս ասի  
 ցէ արիօս թէ՝ զայս ամ առնէ որդին  
 ոչ ոմ նախկին առնողն, այլ ոմ գործի  
 առաջին առնողին: Չայս իմացումս 'ի  
 բաց մերժէ յօհաննէս ասելով. (զոր  
 հայր առնէ՝ զնոյն և որդին նմին նման  
 գործէ:) Ըպա ուրեմն ոմ հայր գործէ  
 իւր յատուկ զօրութն. նոյնպէս և որդի:  
**Դ**արձեալ գիտելի է՝ զի լոյս՝ ի լուսոյ  
 կոչի բանն ամ ծնեալ՝ ի հօրէ. ոմ  
 ասէ դաւիթ: (Լուսով երեսաց քոց տե  
 սանեմք զլոյս:) Եւ ինքն մօրն ասէր.  
 (Ես լոյս յաշխարհ եկի:) Եւ պօղոս յեբ  
 րայեցւոյ ասէ: (Որ է ճառագայթ փա  
 ռաց հօր՝ և նկարագիր էութե նր:)  
 Եւ այս վն բազում պատճառի ըստ հա  
 մեմատութեան լուսոյ առճառագայթն  
 իւր: Նախ վն պատերազմութե՝ զի մի՛  
 տեսանիցի ախտ ինչ և իր մարմնական  
 յամօային ծնունդն. ոմ ոչ է՝ իմէջ լու  
 սոյ և ճառագայթի իւր: Չայսոսիկ ասէ  
 երանելին կիւրեղ՝ ի գիրս պարապմանց:

Երրորդ՝ զի անճառելի է որպիսութի  
 արձակման լուսոյն. և Խոր մեր ասէ. (ոչ  
 ոք գիտէ զհայր, եթէ ոչ որդի. և անդ  
 րադարձեալ ևս.) Երրորդ՝ զի՝ ի լուսոյն  
 է ճառագայթն իւր ի պատճառէ. և  
 Խորն ասէ. (եւ ի՛հ հօրէ և եկի յաշխարհ:) **Չորրորդ՝** զի անմիջոց ժամանակի է ծա  
 գումն լուսոյ. այսպէս (՝ ի սկզբանէ էր  
 բանն. ասէ աշխարանիչն յօհաննէս.) **Հինգերորդ՝** զի ուն անբաժանելի է ի  
 լուսոյն. (և բանն էր առ Ծած ասէ.) **Վեցերորդ՝** զի մի բնութի է ամենեւին  
 լուսոյն և ճառագայթին իւր. և վն որդ  
 ւոյ վկայէ (Ծած էր բանն.) **Եօթներորդ՝**  
 զի որն լոյսն և ճառագայթն են ի մի  
 մեանս ըստ էութե. այսպէս հայր և որ  
 դի. ուն ասէր. (Ես՝ ի հայր. և հայր յիս  
 է: Որ ետես զիս, ետես զհայր: Ես և  
 հայր իմ մի եմք.) **Ութներորդ՝** զի եղա  
 նակաւ ինչ էացուցիչ է լուսոյ ճառա  
 գայթն իւր. (և բանն նկարագիր էութեն  
 հօր՝ ասէ առաքեալն.) **Իններորդ՝** զի  
 այլ է առանձնապէս լոյսն. և այլ ճառա  
 գայթն իւր ինոյն էութեն. այսպէս և



Եր տեսցուք՝ զի մակեդոն և որք զնո  
 րայն խորհին։ Ըստիճանս դնեն եր  
 րորդու թէն. և անճանեն արարիչ և գոր  
 ծակից և պաշտօնեայ։ Եւ ըստ անճանցն  
 զնորհն յարմարեն։ Սի ասեն զմինն ա  
 րարիչ՝ և զօրու թէ և բնու թէ անսահմա  
 նելի։ Իսկ զմիւսն՝ գործակից զօրու թէ  
 անսահմանելի. զի իւր ասեն արար գոր  
 ծակից և բնու թէ սահմանելի. զի արա  
 րած է ասեն։ Իսկ զմիւսն՝ և զօրու թէ  
 և բնու թէ սահմանելի. զի արարած և  
 պաշտօնեայ և ծառայ է ասեն։ Եւ հաս  
 տատեն զբանս իւրեանց վկայու թէ նբ  
 գրոց։ Սախզի՝ աղօթել և բարեխօսել՝  
 ոչ յարմարի նոյ, զի թէ զքսէ ասի վս  
 մարդեղու թէն. այլ պօղոս ՚ի հռօմայե  
 ցւոց ասէ. (հոգին նբ բարեխօս լինի  
 ՚ի հեծու թիս անմռունչս։) Եւ այժմ  
 պատասխանեսցուք նախ ընդդիմու էցն.  
 և ապա խոստովանեսցուք զհոգին նբ  
 անձմարիտ ընդ հօր և ընդ որդւոյ։  
 Ըռաջինն որ ասէ բարեխօսել՝ այսպէս  
 մեկնէ ոսկեբերանն յօհաննէս թէ՝ զնր  
 ծնեալսն աւագանաւն՝ ըստ չափոյ շնոր

Հացն արժանաւորէր իմաստուէ, Թարգ  
 մանու թէ, և այլն: Բայէս ոմն՝ շնորհ  
 ընդունէր աղօթելոյ կարգաւ. ունի զի՝  
 նմանէ ուսանէին և այլքն աղօթել. զոր  
 և այժմ օրինակէ առ մեզ սարկաւադն.  
 զոր հոգի կոչէի վն հոգևորապէս խօսե  
 լոյն: Իսկ այլք՝ հոգի զհրեշտակական  
 հոգին ասեն. որ տոչեալ է առ իսկահ  
 պանութի մեզ. զի նա ուղղէ զմեզ ի բա  
 րիս. և զաղօթս մեր մատուցանէ նոյն. զոր  
 իտուբիթն ասէ. (յորժամ կացեր յա  
 ղօթս, և նուն քո սառայ, ես մատուցի  
 զաղօթս ձեր առաջի նբնն:)  
 Բայլ նոյն ինքն մըխիթարիչն հոգին:  
 Բայէս ուղղակի է բանս: Զի սովորու  
 թի է նբ գրոց՝ նոյն համարիլ զոր ինչ գոր  
 ծէ՝ իմարդիկ: Ուն ասէր առ աբրահամ.  
 (այժմ ծանեայ թէ երկիւղած ես դու  
 նոյն.) այսինքն, այժմ ծանուցի մարդկան  
 զերկիւղածութի քո: Բայէս և հոգ  
 ւոյն բարեխօսելն է: Զի ինքն ծագէ  
 իսիրտս մեր զբարեխօսն լինիլ յա  
 ղօթս. այսինքն, զայն խնդրել՝ որ ինչ  
 իսկառս նոյն է:



Լըրորորդ առարկու թիւ առաքիլն՝ փոք  
 րագունին է՝ իմեծէ։ Լ. յլ որդին ասէ։  
 (Յորժամ եկեսցէ մըխիթարիչն հոգին  
 սբ՝ զոր առաքեսցէ հայր յանուն իմ։)  
 Լ. այս ասեմք։ Ձի ասի որդի առա-  
 քեալ ի հօրէ և ի հոգւոյն. ըստ այնմ,  
 (տօր տօր առաքեաց զիս և հոգի նորա։)  
 Լ. այս ոչ վն փոքրկու թէ, այլ վասն  
 միութե կամաց նոյ։ Լ. առաքուին հո-  
 գւոյն՝ ոչ զնոճազութի ցուցանէ, այլ  
 համակամութիւն ընդ հօր և ընդ որդւոյ։  
 Լըրորորդ առարկու թիւ. զի շարժիլն ըս-  
 տեղծոճածոյ է. այլ ասէ ծննդոց. (հոգի  
 նոյ շրջեր ի վր ջուրց։) Լ. չյովէլ ասէ.  
 (հեղեց հոգւոյ իմմէ ի վր ամ մարմնոյ։)  
 Լ. այս ասեմք թէ, հոգի նոյ՝ ոմանք  
 զօղս ասեն. որոյ բնական տեղի իւր է  
 ի վր ջուրց։ Դարձեալ՝ շարժումն ոչ  
 րեաց ընդ իւրում նախութեն անշիւթ  
 և անորոշ միութիւն: Զի ոչ երբեք՝ ոչ  
 բանիւ, ոչ իմացմամբ, և ոչ իրօք բա  
 ժանումն ունեւիւ. ոչ իդէմն. և ոչ ի  
 բնութիւն. և ոչ իկամս. և ոչ իգործս.  
 զի միաւորեալն ոչ բաժանի. վասն զի  
 միութիւնն եբարձ զերկուութիւնն:  
 Եւ զայս միաւորութիւն խոստովանիմք  
 մեք մի անձն. և մի դէմս. և մի կերպ.  
 և մի բնութիւն. և մի կամք. և մի ներգոր  
 ծութիւն: Եւ թէպէտ համաձայն մեզ  
 այլք ասացին մի անձն թիւրապէս,  
 մեք ոչ պատրիմք և ոչ հաւանիմք նոյն:  
 Եւ թէպէտ և ոմանք նման մեզ ասեն  
 մի բնութիւն՝ այլ շփոթեալ. ոչ մոլո  
 րիմք ի հոմանուն ձայնս նոյն:

Եւ ի հետեւիմք հարցն սրբոյ՝ որք ա  
 րանց

աւնց կարծեաց և խոտորմանց զմիաւո  
րութիւնն քսի անշարժ պահեն:

Այս բն աթանաս գրէ ընդդէմ արիո  
սի այսպէս. խոստովանիմք զորդին այ  
նախ քան զյաւելիտեանս ծնեալ 'ի հո  
րէ. և յետոյ 'ի ժամանակի ծնեալ 'ի մո  
րէ. զնոյն գող ամ և որդի այլ ըստ հոգ  
ւոյ. իսկ որդի մարդոյ ըստ մարմնոյ.  
ոչ երկու բնութիս զմին որդին. զմինն  
երկրպագելի և զմինն. աներկրպագելի  
այլ մի բնութի այլ բանին մարմնացելոյ:

Զնոյն ևս բն կիւրեղ գրէ 'ի թղթին որ  
առ սեկունդոս. մի ասեմք զքս ամ մար  
դացեալ. և մի զբնութի նր. ում հարքն  
ասացին. մի է բնութի բանին այլ մար  
մնացելոյ: Ըստ մեծն դիոնիսիոս 'ի  
բազում տեղիս միաւորեալ և մի խոստո  
վանի զբնութի բանին այլ մարդացելոյ:

Զոր նախ յեկեղեցական քահանայա  
պետութեն յերեք գլուխն ասէ:

Ըմենականոր և անշիթ մարդանալովն  
ըստ մեզ մարդասիրապէս 'ի բնութիւնս  
մեր տեսակացեալ՝ և առ բաժանականս  
մեր՝ անայլայլաբար ըստ բնութի միոյ  
յառաջ եկեալ:

Դարձեալ ինոյնն ասէ. քանզի միութն  
 և պարզութիւն յնի անձպետականին բա  
 նինն ըստ մեզ մարդանալովն առ շարադ  
 րութիւն երևումն՝ զմեր նոճաստութիւն  
 ըստ իւրոց ծայրագունից անձութեանն  
 միացուցեալ: Դարձեալ ՚բն յըռէթե  
 ոս յերկրորդ գլուխն անձային անոճանց  
 ասէ: Չի և բնութիւն ՚ի չափ եկն յա  
 ղագս մարդասիրութիւն. և ճշմարտապէս  
 կացաւ և այր եղև գերագոյնն անձ:  
 Եւ դարձեալ ասէ. անմշտն պատճառ  
 և լյողական յնի անձութիւն՝ ոչ մասն և  
 ոչ բոլոր գոլով. և բոլոր և մասն. որպիս  
 զամ մասն և բոլոր յինքեան առեալ:  
 Դարձեալ ասէ դիօնէսիոս ՚ի չորրորդ  
 թուղթն. յն որ անդրն է քան զամ  
 մարդիկ՝ կապէս շարակարգեալ որպիս  
 նոյն ըստ բոլորութեան ճշմարտապէս  
 մարդ եղեալ: Եւ դարձեալ ասէ. մեք  
 զյն ոչ մարդկօրէն որոշեմք: Եւ դար  
 ձեալ ասէ. վերագոյնն եութիւն՝ որպէս  
 մինչ այսօրիկ սեպհականութիւն և ՚ի գոյ  
 ութի ճշմարտապէս եկեալ: Եւ դար  
 ձեալ ասէ. գերագոյնն քան զեութիւն՝



էսցաւ . Լեզերագոյնն քան զմարդ ներ  
գործէ զմարդոյ : Եւ դարձեալ ասէ .  
ոչ մարդ էր քս , ոչ ույ ոչ մարդ . այլ  
ույ 'իմարդկանէ անդր քան զմարդիկ .  
Լեզերագոյն մարդ ճշմարտապէս եղեալ  
մարդ : Եւ դարձեալ ասէ . ապա ոչ  
ըստ այ զածայինն գործեալ , և ոչ ըստ  
մարդոյ զմարդկայինա , այլ այրացելոյ  
այ նոր իմն զածայրական ներգործու  
թի 'իմեզ կենցաղավարեալ : Դարձել'  
սբն յըռէթէոս ասէ . ուստի վս զի մին  
ջև ըստ բնութե սակս մարդասիրութե  
եկն . Լճշմարտապէս դոյացաւ այր :  
Եւ դարձեալ' քանզի անութեն միա-  
նորութի . զարամ որոշողութեցն մակու  
նին . և ոչ ինչ նունազէ միաւորեալ :  
Եւ վարդապետն Պռանգաց զորե  
ալ պերտ կոչին' այսպէս գրէ թէ , 'իչորս  
առարկութեանցն զոր ասեն թէ' անձն  
զանձն էառ , թէ բնութինն զանձն . սո  
քա սուտ են ասէ . իսկ թէ անձն զբնութի  
ն էառ' այս ճշմարտի է . իսկ թէ  
բնութինն էառ զբնութի' թէ զհասա  
րակ բնութինն ասեն , սուտ է . եթէ ըզ

புது

Բնութիւն որ յանձն բանին՝ ճշմարիտ է։  
 Ըրդ՝ զայս նոքա։ Ըլ մեք ոչ մտացա  
 ծին բանիւ իշխեմք ինչ յաւելուլ կամ  
 պակասեցուցնել։ Ըլ հաստատ կամք  
 եւմք իվր նբցն դաւանութեց. որք ու  
 սուցին մեզ զխորհուրդ անպաշտուէն  
 ունցուցաւ։ Ըյսքան առ այս բաւական  
 նասցի։ Եւ զայն ամ գրացես իգիրս  
 հարցմանցն յերկարեալ։

Տարցունք էրկեւնից առ Մարգարէ-  
 Բնին։ Գլուխ. ԽԵ։



Տարց։ ԱՐԴԵՆ ՍԻԹԻՒՆՆ  
 քսի տեսանէ՞ զանութին  
 թէ ոչ։ Պար։ Երեւի թէ՝  
 բաժանես զմարդկութին.  
 և որիչ իմանաս ըզմարդն  
 և զանն։ Ըյո՛ բնութք բաժանեմ. այլ  
 անձամբ միաւորեմ։ Տարց։ Ընձն այն  
 գոյացութի՞ն է թէ լոկ անուն. զի թէ  
 գոյացութի՞ն է՝ միաւորեալ է ընդ գոյա  
 ցութի բանին. զիմորդ ոչ գիտէ զգոյ  
 ացութին իւր։ Խսկ թէ միայն անուն

առանց հուրի՝ ապա անուամբ խոստովանիս ամ զքս. և ոչ գոյացուիք. և հաւատարես զնա մովսէսի՝ որ անուամբ ամ կոչեցաւ և ոչ հուր: Եւ զարձեալ քսն անուն՝ զմիաւորութիւն նշանակե երկուց բնութեց. ըստ որում ամուրն հօծ զմարդկութն. ուն ասէ ամաբանն ևս բն կիւրեղ: Բրդ՝ եթէ բաժանեցեր զքս՝ բաժանեցար ի հաւատոցդ և ոչ լինիս քրիստոնեայ: Եւ այսպէս բազում է ի գիրս հարցմանցն վս միաւորութե բանին և մարմնոյն ընդդէմ նես տորի և երկաբնակացն. որ բաւական լուծուե է բանիս: Բայ որ հարցանես թէ՝ մարդն քս տեսանէ զամ թէ ոչ, համաձայնիս հրեիցն՝ որք ասէին. (դու մարդ ես՝ և զանձն քո ամ առնես.) վս որոյ հրեայքն գայթակղեցան. և հեթա նոսք յիմարեցան: (Եւ կորուսից զիմաստութի իմաստնոց. և զխորհուրդս խոր հրդականաց առ առաքելն:) Եւ ինքն ճշմարտութն ասէր. (գոհանամ զքէն հայր՝ զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց՝ և յայտնեցեր տղայոց և անմեղաց:)

Զի իմաստունք մաքառին ընդդէմ հա  
 չատոյ. և քննու թէ մտաց ոչ կարեն հա  
 սանիլ. և զրկին իփրկութէ իւրեանց:  
 Զի հաչատացեալքն փրկին. և հակա  
 ռակքն կորնջին:

Իսկ հիմն հաչատոյս մեր՝ քն է եղեալ  
 իհօրէ. և հաստատութիւն սբ գրոյ  
 վկայութիք. և բանք վարդապետաց.  
 և կանոնք օրինաց. զոր կամիմ իկար  
 ճոյ հաստատել:

Սախ՝ անօթ ընտրութի առաքեալն  
 պօղոս գրէ հաչատացելոցս. (քն նյ զօ  
 ղութի և նյ իմաստութի): Ըրդ՝ քնն  
 որ է օծեալ անօթքն՝ և նա նյ իմաս  
 տութի է և ճանաչէ զանձ. տգիտութե  
 կորուսեր զնա. և որո՞յ է իմաստութի:  
 Երկրորդ՝ վկայէ սիրելի աշակերտն յօ  
 հաննէս: (Զանձ ոչ ոք ետես բայց միա  
 ծինն որդի՝ նա պատմեաց մեզ: )

Եւ միածին որդի գիտացաք զբանն  
 անձ՝ ծնեալ իհօրէ և եղեալ որդի կու  
 սին: Ըրդ՝ իմարդկանէ ոչ ոք ետես  
 զանձ, և որդի կուսին ոչ ետես ոմ դու  
 ասես, սուտ է ապա և պատմութիւնն

զոր ինչ ուսոյց մեզ. զի ոչ է տեսեալ և  
սլատմէ. ահա անդունդք հայհոյուէ.

և զոր իկարգիս է լռեմ:

Երրորդ՝ գրէ առաքեալն. (բազում  
մասամբք և բազում օրինակօք՝ խօսե  
ցաւ ամ ընդ հաթս մեր. որ է մարդա  
րէիւք և հրեշտակօք. իսկ ի վախճան  
աւուրցս՝ խօսեցաւ ընդ մեզ որդւոյն:

Ըրդ՝ եթէ տգէտ է որդին այ հօր՝ տր  
դէտ որդւոյն խօսեցաւ ընդ մեզ. տգի  
տու է եղիցի և օրէնքս նոր քան զհինն:

Չորրորդ՝ նոյն առաքեալն ասէ. (մեք  
զմիտս քսի ունիմք. և հազարապետք  
եմք խորհրդոցն այ): Ըրդ՝ եթէ քս  
տգէտ է, և նոքա զմիտս տգիտի ունէին,  
ո՞րայ լինէին հազարապետք այ խորհր  
դոցն. կամ հազարապետքն առաւել  
են քան զխորհուրդն այ:

Հինգերորդ՝ ասէ իմատթեոսեան ա  
ւետարանին խոստովանելով. (ամ ինչ  
տուճաւ ինձ ի հօրէ իմմէ): Ձի՛նչ իցէ  
տուճեալ յորժամ զկատարեալ դիտու  
թիւն ոչ ետ. եթէ ասես բանին ետ և  
ոչ մարդոյն, ապա մարդկութիւն սուտ



Խոստովանի. (սիմ ինչ տունաւ ինձ.) զի  
 ոչ ետ զդիտութիւն. և կամ բանն զմարդ  
 կութին զրկեաց 'ի դիտութիւն և ոչ ետ:  
 Այցերորդ՝ 'ինոյնն ասէ. (ոչ ոք ճա-  
 նաչէ զհայր, եթէ ոչ որդի. և ոչ զոր-  
 դին, եթէ ոչ հայր:) ('որդ՝ եթէ զհայր  
 ոչ ոք 'ի յօտարաց ճանաչէ՝ և ոչ որդին  
 ճանաչէ ըստ քեզ՝ եղիցի և որդին օտար  
 'ի հօրէ: Եւ դարձեալ՝ ոսկ դու կար  
 ծես և ինքն որդի մարդոյ՝ զինքն ոչ ճա-  
 նաչէ. և հրէայքն ոչ ճանաչէին ասելով.  
 (ո՛վ է այն որդին մարդոյ.) ապա և որ-  
 դին մարդոյ՝ եղիցի ըստ կարգի հրէ  
 իցն. և ոչ առաւել:

Եւ թներորդ՝ զի ի վր բերէ. (և ում որ  
 դին կամ լցի յայտնել.) բայց կամեցաւ  
 և յայտնէ զինքն որդի և զհայր 'ի ձեռն  
 նշանաց աշակերտաց իւրոց. ոսկ 'ի պրտ  
 ղոյն ծառն երևի: ('որդ՝ եթէ յայտնէ  
 զինքն աշակերտաց իւրոց՝ և մարդկու-  
 թէ իւրոյ ոչ յայտնեաց, եղիցի ինքն  
 տգէտ քան զաշակերտս իւր: Եւ կամ  
 ոչ ինչ յայտնեաց զոր ինքն ոչ գիտաց:  
 Եւ թներորդ՝ ասէ 'ի յօհաննու աւել-

տարանին • (ոմ գիտէ զիս հայր՝ գիտեմ  
 և ես զհայր) Յայտնապէս ցուցանէ գի  
 տութիւն զինքն հաւասար հօր : Ըրդ՝  
 եթէ հայր առաւել գիտէ՝ և որդին նը  
 չազ, այս լինի կամ հօր նոչազ գիտել  
 ոմ որդի • և կամ որդւոյ ոչ ճշմարիտ  
 ասել :

Եւսներորդ՝ ասէ յօհաննէս • (հայր սի  
 րէ զորդի • և գամ ինչ ցուցանէ նմա :)  
 Ըրդ՝ եթէ զբոլորն ցուցանել նշանէ  
 սիրոյ հօր • ապա թէ ոչ ինչ ցուցանէ՝  
 ասէ զորդի :

Տասներորդ՝ ասէ իմատութոսն • (զի՞  
 խորհիք իմիտս ձեր) : Եւ յօհաննէս  
 ասէ • (ինքն գիտէր զինչ կրէր իմրդն) :  
 Եւ զԺածուկ սբրտին գիտելն՝ միայն  
 այ է • ըստ այնմ, (որ քննէ զսիրտս և զե  
 րիկամունս ամ) : Ըրդ որ զայլոց սիրտս  
 գիտէ՝ ապա առաւել զիւրն գիտէ :

Ըրդ՝ կամ ստեան զաւետարանն • կամ  
 սուտ լեր իբրանս քո ըստ նմանութի  
 հօր քո սատանայի :

Մետասաներորդ՝ ասէ ի յօհաննէս •  
 (ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն •)

այսինքն, որ տանիմ առ հայր. և ճշմարտութեան համար ձեզ: Բայց եթե ինքն ճշմարտութեան ոչ գիտէ, մեզ ո՞ւր ցուցանէ: Եւ թե ինքն մոլորեալ է՝ զմեզ ո՞ւր տանի առ հայր: ✠ Եւ քանի որ տառապանքներով ասէ զուկաս. (մանուկն ածեր և զօրա նայր լի՝ շնորհօք և իմաստութեան):

Քի լիութեան շնորհաց նր՝ մեք արդարացաք. և իմաստութեան նորա իմացաք գիտ. ուր ասէ յօհաննէս. (թեքնքն՝ ի ձեռն մովսէսի տողան. շնորհքն և ճշմարտութեան՝ ի ձեռն յսի քսի եղէն):

Բայց աւետարանն լի ասէ իմաստութեան. և դու պակաս: Բայց եթե պակաս է շնորհն և իմաստութիւնն, մեք զիմարդ լիութեան առաք:

Եւ քանի որ տառապանքներով ասէ եսայի վասն քսի. (եւ ից զնա հոգի իմաստութեան. և հանձարոյ. գիտութեան. և խորհրդոյ, և այլն): Եւ ինքեքոյ սոցա պարունակին ամ ճանաչելիք. քանզի առ իմաստութիւն է ճանաչումն ամ ամայնոցն:

Եւ առ հանձարն՝ ճանաչումն ամ նիւթականաց. և առ գիտութիւնն՝ ճանաչումն

չունի եզրակացութեանց։ Եւ առ խոր  
հուրդն՝ ճանաչումն ամառնելեաց. ա  
պա ուրեմն հոգին քսի՝ ունի զամ ճա  
նաչումն լցեալ հոգւոյն սբւ։

Չորեքտասաներորդ՝ ասէ պօղոս յիփե  
սացւոց. (Թէ հայր կացոյց զքս յերկնա  
ւորս իւր ամ իշխանութեց. և պետու  
թեց. և զօրութեց. և ամ անոճանելոց.  
ոչ միայն յաշխարհիս, այլ և ի հանդեր  
ձելումն։ Եւ արդ՝ յերկնաւոր փառսն  
այն է գերագոյն, որքան կատարեալ  
տեսանէ զամ. ապա ուրեմն հոգին քի  
կատարելագոյն ճանաչէր զամ։

Հնգէտասաներորդ՝ ի համբառնալն  
յերկինս, ասէին տարակուսեալք վե  
րին զօրութիւն։ (Ո՞վ է սա որ դիմեալ  
գայ յերկրէ. գեղեցիկ պատմութեանաւ.  
և բուն զօրութիւն։ Եւսէ՝ ես եմ որ խօ  
սիմ զարդարութիւն. և զերաւունս փր  
կութիւն։ Եւսեն դարձեալ՝ ընդէր կար  
միր են ձորձք քո. ասէ՝ հնձան հարի  
միայն։) Հնձան զխաչն ասէ՝ որ արեամբ  
ներկեցաւ։ Եւրդ՝ ամ մարդկան մարգա  
րէից ևսբց՝ հրեշտակք ուսուցանեն. և

նոքա 'ի քսե ուսանին. ապա զիմորդ  
պակաս լիցի գիտութիւն ուսուցանողն  
հրեշտակաց:

Աւելտասներորդ՝ ասէ յաւետարանին  
յօհաննու. (գիտեմ զնա. և զբան նր  
պահեմ. և թէ ասեմ ոչ գիտեմ զնա,  
ձեզ նման սուտ լինիմ): Լ'որդ՝ եթէ գի  
տէ զհայր՝ գիտէ և զինքն. և թէ զինքն  
ոչ գիտէ, զիմորդ զհայրն գիտասցէ:

Եւ թէ զհայր ոչ գիտէ, զիմորդ զբան  
նր պահէ առ ինքեան:

Եւ թնւասներորդ՝ ասէ պետրոս 'ի  
հարցանելն ցնա. (տ'ր գու զամ գի  
տես. և զամ իսկ ճանաչես. և եթէ սի  
րեմ զքեզ): Ո'ւ զամ գիտեր որ զինքն  
ոչ գիտէ ըստ քեզ. իսկ թէ զամ ճա  
նաչէ, և զսերն պետրոսի, ապա ոչ է պա  
կաս գիտութիւն նր:

Աւելտասներորդ՝ ասէ առաքեալն.  
(ինմա բնակի ամ լրուեալ ամութեն  
մարմնապէս. որ է էապէս): Լ'որդ՝ եթէ  
բոլոր ամութիւն 'ի քսե էացեալ է մար  
մնապէս, և ծածկէ զգիտութիւն 'ինմա  
նէ, այս լինի կամ ոչ ամ մարմնացեալ



Եւ մարդացեալ, կամ զէութիւն տոճեալ,

Եւ ի գիտութիւն զրկեալ. որ է սուտ:

Եւ նաեւ անհրորդ՝ ասէ՝ իմաստութեանն.

(Երկինք Եւ երկիր անցանհն. Եւ բանք իմ

մի՝ անցցին): Եւ, որ է եթէ բան քսի

բան մարդոյ է Եւ ագիտի, ապա անցա

ւոր է. իսկ թէ այլ բան է Եւ անանց, ոչ

ուրեմն է ագիտ կամ նոճազ գիտութիւն:

Վրասաներորդ՝ ասէ առաքեալն կողո

սացւոց. ('ի քսն են ծածկել ամ գանձք

իմաստութե Եւ գիտութիւն): Եւ, որ է ագիտ

ոչ ունի զբոլոր զամ իմաստութի Եւ զգի

տութի գանձեալ. իսկ գանձն Եւ աղ

բիւրծ իմաստութե երկնի Եւ երկրի ո՞ր

լինի կարօտ գիտութե կամ ստացեալ

յայլմէ: Եւ թերեւս ասիցէ երկաթնակն

թէ, սոքա ամբն անձինն վերաբերին

քսի Եւ ոչ մարդկուէն: Եւ սեմք առ այս.

Եթէ մինչեւ ցայժմ զբնութիւն բաժանէ

իր. Եւ այժմ զանձն Եւ: Եւ, որ է եթէ մի

անձն խոստովանիս զքս, Եւ զբնութի մար

դոյն միացեալ 'ի յանձն բանին, որ ինչ

բանին է ետութի Եւ բնութի՝ ամեն եղիցի Եւ

մարմնոյն իւրոյ միաւորութիւն. իսկ թէ

անլ է բանին և անլ է մարմնոյն, ապա բա  
 ժանես զմարդկունին՝ ի յանձնէն. և ասես  
 երկու անձն և երկու բնութի ըն նեստորի  
 առաջնորդին քոյ. և պողոսի սամոստա  
 ցւոյ. որ մինչև ցայժմ ծածուկ էիր նես  
 տորեան. և այժմ յայտնեցեր զքեզ, լ) և  
 այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայուէ  
 կարգիս ո՛վ նեստորական երկաբնակ և  
 մարդադաւան որոշող քմի և որ շեալդ  
 ի շնորհաց նորին. որ ասես սոսկ մարդ  
 դոլ զքմ. և տգէտ. և տկար. և անկանացու  
 մարմին. և անկէլ ը կարեօք մարդկան:  
 Բսաներորդ առաջներորդ՝ արդ՝ եթէ  
 քմ տգէտ ունէր զմիտս և տկար հոգի և  
 անկանացու մարմին. և եկն քմ զի բարձ  
 ցէ զտգիտութիս մեր և լուսնորեսցէ (որք  
 նստէաք ի խաւարի) և նա է գառն այ  
 որ բառնայ զմեզս չի և զապականութի:  
 լ) և արդ՝ տգէտն զտգիտութի ոչ կարէ  
 բառնալ. և ոչ մեղաւորն զմեզս. և ոչ ապա  
 կանացուն զանկանութի. և ոչ սոսկ մարդ  
 զմարդ կրէ փրկել: (Չի սուտ է փրկութի  
 մարդոյ.) ապա ուրեմն բարձօղն տգի  
 տուէց՝ ոչ ունէր տգիտութի. և բարձօղն

մեղաց և ապականուէ. ոչ մեղք և ոչ ապա-  
 կանութիւն: Եւ մարդարէն վկայե. (ոչ ա-  
 րար մեղս. և արդարացաւ հոգւով: և  
 մարմինն ընդ ոչ ետես զապականութիւնսն:)  
 Քսաներորդ երկրորդ՝ առաքելն պօղոս  
 և աւետարանիչն յօհաննէս վկայեն հան-  
 դերձելոյն թիւ (տեսանելոց եմք զնա ոպ  
 և էն. և ճանաչեմք զնա ոպ նայն ծանել  
 զմեզ): Եւ թիւ յարուէն հասարակ  
 արդարք տեսանեն զամբ դէմ յանդիման  
 ոպ և է, և այժմքս ոչ կարէ տեսնել, փոքր  
 լինի քան զամբ մարդ գիտուէ որ է սուտ:  
 Քսաներորդ երրորդ՝ ասաց իմրն վս հո-  
 գւոյն սբայ. (նո ոչ տեսանէ զնա. և ոչ ճա-  
 նաչէ. բայց դուք ճանաչէք. զի առ ձեզ  
 բնակեսցի): Եւ թիւ առաքելքն որք  
 բնակարանք են հոգւոյն՝ ճանաչեն զհո-  
 գին ամբ. և մարդկութիւն քի ոչ ճանաչէ,  
 փոքր քան զբնակարանսն եղիցի քս:  
 Քսաներորդ չորրորդ՝ ասեն վարդա-  
 պետք վս հրեշտակաց թիւ ունին առա-  
 չօտեան և երեկոյի ճանաչումն. առաջօ-  
 տեան՝ որք տեսանեն զբանն ամբ. և առ-  
 նուան զգիտութիւն մանէ: Եւ երեկոյի՝

որք տեսանեն զարրժս։ Բրդ'եթէ հրեշ  
 տակք տեսանեն զբանն անձ, և մարդն քս  
 ոչ տեսանէ ոմ ասէ նեւորդ, ապա քս  
 փոքր է գիտուէ քան զհրեշտակս։ Բայա  
 ոմ է (գլուխ ամ իշխանուէց և պետուէց  
 և ուսուցիչ։ և ոմ երկիրպագանեն նմա  
 երկնաւորք և երկրաւորք և սանդարա  
 մետականք. և ամ լեզու խոստովան լի  
 ցի եթէ տրէ յն քս' ի փառս անհր.)  
 Քսաներորդ հինգերորդ' ասէ տրն' ի  
 յօհաննու աշեւարանին։ (Բ' յս են  
 կեանք յաշիտենականք' զի ծանկցեն  
 զքեզ միայն ճշմարիտ անձ. և զոր առա  
 քեցեր զյն քս։) Բրդ'եթէ ճանաչելն  
 զանձ հայր և զյն քս' կեանքէ յէմնից,  
 և մարդն քս ճշմարտուէ ոչ կարէ ճանա  
 չել ոմ գուդ ասես, ապա զրկեալ է ի  
 յէմնից կենացն։ Բայա ոմ ասէ. (որ ու  
 տէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի  
 զկէնս յաշիտենականս.) յորժամ ինքն  
 ոչ ունի զյաշիտենիցն, այլոցն ոմ տայ։  
 Բայա ոմ ասէ. (ես եմ ճանապարհ և  
 ճշմարտութիւն և կեանք։) Եւ յօհաննէս  
 ասէ. (կեանքն յայտնեցաւ մարմնով։)

Քանի որ որդի վեցերորդ՝ ասէ տեսիլն.  
(արժանի է գառին առնուլ զամբուսն  
և զգլխու թինն. որ է ճանաչումն ամիս)  
Ըրդ՝ գառն այ է որդին մարդոյ. և նա  
է առեալ միաւորու թիւ բանին զամբու  
սին և զճանաչումն ամիս:

Արսաներորդ հօթներորդ՝ ասէ յօհան  
նէս. (ոչ եթէ հայր դատէ զոք, այլ  
զամ դատաստան ետ որդւոյ իւրում):  
Ըրդ՝ դատէ որդի՝ ոչ միայն ըստ նմ  
ութեան, այլև ըստ մարդկութե. ըստ  
այնմ, (յորժամ եկեացէ որդի մարդոյ  
փառօք հօր, ևնստցի յաթոռ փառաց  
իւրոց ևայլն): Ըյլ դմէորին պարտէ  
ունել անհուն գիտութի. զի քննել կա  
րասցէ զամ բնութիս հրեշտակաց և  
մարդկան. և զամ գործս եղեալ և զի  
նելոց. զխորհուրդս և զբանս բոլորից.  
զառաջին զմիջին և զվերջինս. ապա ու  
րեմ հոգին քնունի անհուն գիտութի.  
զի ճանաչէ զանհուն գիտացեալս:

Վրսաներորդ ութներորդ՝ ալպերտ  
վարդապետն ձեր ասէ թէ՝ քսէր հա  
մանգամայն ճանապարհորդ և ըմբռնող՝ ի  
հէտ  
501



կէտ յղուէ իւրոյ: Եւ որ՝ ճանապարհորդ եր  
բայտ մարմնոյ տնօրէնուէ մահոճամբն և  
յարու թքն մտանել՝ ի փառս: Եւ ըմբռ  
նող՝ զի բանական իմացմամբ մտաց՝ զմայ  
լեալ էր միաւորուէ անժային փառացն.  
և այսու փառօք ըմբռնէր քս զամ հու  
նաւորս ներգործուէ. և ճանաչէր զամ  
անհունս գերազանց տեսու թք:

Եւ Բսաներորդ իններորդ՝ ասէ ի զի դորոս  
վարդապետն նց թէ՝ երրորդու թին ին  
քեան միայն է ծանուցեալ. և առեցեալ  
մարդոյն: Իսկ դամասկացին յօհան գը  
լուին երկաթնակաց ասէ թէ՝ բոլոր ան  
ուին է միաւորեալ ը մարդկային բնու  
թին ի քս. և տեսանի ի հոգւոյն քսի:  
Եւ օգոստինոս վարդապետն նց ասէ  
՝ ի գիրս երրորդուէն թէ՝ ըմբռնել զան  
ային էութիւն՝ պատկանի որդւոյն այ ըստ  
բնութեն. և որդւոյն մարդոյ ը շնորհաց  
միաւորուէ: Եւ թովմայ վարդապետն  
իւրեանց ասէ թէ՝ ոս հոգին քսի ճա  
նաչէ զամ անհունս. այսպէս զի հոգին  
քի ճանաչէ զբովանդակ կարողութին  
իւր և զամ ի յորս կարէ: Եւ Լարդ՝

կարէ՛ սրբել զանհուն մեղս. որոյ ասէ  
յօհան 'իկաթուղիկեսն. (նա է քաւու  
թի մեղաց մերոց. և ոչ մերոց միայն,  
այլև բոլոր աշխարհի. ապա ուրեմն հո  
գին քսի ճանաչէ զանհունս:

Երեսներորդ՝ զի վարդապետք նբք՝  
օրինակ տան մարդեղութեն քսի. ոյ  
լոյս ընդ օդ. և հուր ընդ երկաթ միա  
ւորեալ: Եւրդ՝ ոյ օդ լուսաւորեալ  
ոչ ունի մասն խաւարի. նոյնպէս հո  
գին քսի միաւորեալ է 'ի բանն անձ. և  
ոչ ունի մասն տգիտութե:

Եւ որոյս հուրն յերկաթ միաւորեալ  
բաւնայ 'ինմանէ զցրտութի և զսեռ  
թի և մնայ ծանրութիւն: Եւ յսպէս մար  
մինն քսի միաւորեալ ընդ բանն անձ՝  
ունի զկարողութի և զանձութի բանին.  
որոյս ասէ անձաբանն գրիգոր. համար  
ձակիմ և ասեմ հաւասար անձ. որպէս  
առօղն, նոյնպէս և առեալն:

Չի անմարմինն մարմնացաւ. բանն  
թանձրացաւ. և անձն մարդ եղև մի անձ  
նաւորութե և միաւորեալ բնութե. մի  
տր. մի քս. մի օրդի այ և օրդի կուսի.

խոստովանեալ յերկնաւորաց և յերկրա  
 շորաց. և հաստատեալ սբ Կրօնի վկայ  
 ու թի՛ք ոմն ցուցաւ : Ըրդ՝ քննել մտօք  
 յանդդնու թի՛ք. և հաւատալն կեանք.  
 զի հաւատոցն է փրկութի : Եւ դարձել՝  
 քննու թի՛ք մտաց ոչ լինի հասեալ անհա  
 սանելին. այլ հաւատով լինի իմացել.  
 և յուսով ըմբռնեալ. և սիրով միաւորել :  
 Ըրդսպէս պարտ է (սրտիւ հաւատալ. և  
 բերանով խոստովանել : Զի որ խոստո  
 վանի զիս առաջի մարդկան՝ խոստովա  
 նեցայց և ես զնա առաջի հօր և հրեշտա  
 կաց սրբոց : Եւ որ ուրանայ զիս՝ ուրա  
 ցեալ լիցի առաջի հրեշտկաց առ ճրշ  
 մարտութն : ) Զի նամ ճշմարիտ դաւա  
 նողքն՝ զքն նա խոստովանեցան. և ի  
 նոյն նահատակեցան. և առ ճշմարտու  
 թի՛քն քն յերկրէ յերկինս վերափոխե  
 ցան : Եւ մեք զնոյն դաւանութն պինտ  
 կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի  
 մահ. և յետ մահու՝ նորին խոստացեալ  
 բարեացն արժանաւոր լիցուք ի քն յս  
 ի նոր մեր ամէն :

Եւ կատարուեմք Չորրորդ հատորին :

ՅԵՐԵՄԻԱՍ ԶԻՆԻՆԻ ԿԵՐԵՐԴ ԶՊԵՐԵՆ :



առասներորդ վեցերորդ՝  
առելէլքն քան զչորս հա-  
տորսն՝ են մին Ահարամ  
վարդապետի ասացեալ  
յաղագս նք երրորդութեն և միոյ մե-  
ութեն երկար մտօք, և նք գրոյ վկայ  
ութիւն հաստատեալ :

Քառասներորդ եօթներորդ՝ դաւա-  
նութի հաւատոյ չորեքուսան գլխով :  
Եւ ինոյնս վս տեսութիւն մտաց՝ և տե-  
սութիւն զգայութեց : Եւ բանականին  
սկիզբն և կատարումն :

Քառասներորդ ութներորդ՝ վս ճշ-  
մարտութի հաւատոյ, թէ զանազան է  
բանական քննութիւն և հաւատոյ տեսութիւն :

Քառասներորդ իններորդ՝ վս հաւա-  
տոյ՝ յուսոյ՝ և սիրոյ : Եւ թէ ո՞ր զանա-  
զանին սոքա : Եւ ինոյնս վս հաւատոյ  
և գործոց :

Յիսներորդ՝ կտրումն գրոյս ելիշմկաբն :





|                      |       |
|----------------------|-------|
| Սոստովանող ճրշմարտու | Թեան. |
| Լճնանք Երրորդու      | Թեան. |
| Ո՛վ վարդապետդ անծա   | սէր.  |
| Գրիգորիոս վճկայա     | օհր:  |





✿ Հոգի Հեգեորդ:

Տեւան Ահրոհ Արդարեղի ստացեալ  
Յոգ-Գո Եւ Երրորդու-Լէն և խոյ անձու  
Լէն. և իրի-նոն Տնօրէնու-Լէն Կոն:

Գլուխ. ԽԶ:



Ը. Խ. Տ. Լ. Մ. Ե. Խ. Խ. Խ.

տովանիմք զմի անձու թին յե  
րիս անձնատրու թին. ոչ ըստ  
անձանցն բաժանեալ անձու  
թին յերիս. իբրու ոմն արարիչ և ոմն  
արարած. և իբրեւ զգործիս. և ոմն ար  
բանեակ և պաշտօնատար. զի այս արի  
ոսի մոլորուէն է. և հեթանոսաց բազմ  
անձու թէն. Եւ ոչ ըստ անձու թէն մի  
ու թէ և զերիս անձինս խառնակել շը  
փոթմամբ մի իմն իմանամք զանոճանա

Կոչու թիւն հայր և որդի և հոգի սբ լոկ  
յորջ յորջմունք միոյ դիմաց. ըստ ու  
րում ոմն մարդ՝ զի կոչի մարդ և կենդա  
նի և սոկրատէս և մի է. քանզի այս սա  
բէլի է հրեականին համաթոհի:

Եւ խոստովանիմք զհայր և որդի և  
զսբ հոգի երեք անձինք և մի անձուի.  
ըստ որում երեք լապտերք՝ իտան մի  
ում վառեալք՝ երեին ըստ անձանց  
բաժանեալ և լուսովն միաւորեալ:

Բայց զի օրինակն ոչ անմիջ համեմատի  
այնմ որոյ է օրինակ. զի մի՝ ի լապտե  
րացն յայլոցն զատեալ և զիւր լոյսն լըր  
մամբք ընդ ինքեան առնու որոշեալ  
յայլոցն: Իսկ աստ ոչ այնպէս. քանզի  
որդին այ մարդ եղեալ՝ ոչ բաժանե  
ցաւ ի հօրէ և ի հոգւոյն. և ոչ մասն  
ինչ անձու թէն միացաւ ի մարդկուին:

Եւ ('ինմա բնակի ամ լրումն անձու  
թէն մարմնացս.) և ոչ նոքին թափուր  
հացին յանձու թէն. զի այս մարմնոյ է  
և նիւթոյ: Իսկ աննիւթ հուլիւն մի  
անձու թին՝ եր բովանդակ ըստ բոլորին  
'ի հայր և ի հոգին և ի մարմինն մարդ  
կայ

Կային զոր զգեցաւ միայն որդին. քան  
 զի հայր և հոգին ոչ առին զմարմինն.  
 այլ նոցին հաճութե և գործակցութե  
 մարմնացաւ միայն որդին: Էր 'ի յերկ  
 րի և 'ի հօրի անմեկնելի. զի թեպէտ ան  
 ձամբ բաժանեալ են. այլ բնութե և  
 անժութե միաւորեալք են: Ըստ որում  
 աղբիւր և գետ և ծով՝ անոճամբ և ան  
 ձամբ բաժանեալք. և բնութե մի ջուր  
 են միաւորեալք: Սակայն և ոչ այս ևս  
 օրինակ ուղղակի հանդիպի ճշմարտու  
 թէն. քանզի սոքա երբեմն և 'ի միմեանս  
 լուծանին շփոթեալք յառանձնաւոր  
 ութեն: Եւ առ սբ երրորդութին՝  
 ոչ այսպիսի ինչ տեսանի. զի թեպէտ  
 ասաց բանն թէ՛ (դու հայր յիս և ես 'ի  
 քեզ): Եւ թէ՛ (որ ետես զիս՝ ետես  
 զհայր): Ոչ այսու 'ի միմեանս լուծումն  
 և շփոթութիւն անձանցն ակնարկեաց.  
 այլ զառանձնաւորութեցն զմի բնութի  
 և զանժութի և զէակցութի յայտնաբա  
 նեաց. քանզի որ մի են բնութե՝ նոքին  
 յատկացեալ են անձնաւորութե:

Խոստովանել հայր և որդի և հոգի սբ.

հայր անծին և անսկիզբն. որդին սկսել  
 'ի հօրե ծննդեամբ. և հոգին նբ բրդիս  
 մամբ և ելողապէս. ոչ ժամանակաւ. և  
 ոչ զկնի եղեալ. քանզի ոչ է յետ ժամա  
 նակի անժամանակն եից սկսեալ. զի թէ  
 պէտ և ծնունդ է հօր որդի սկսեալ 'ի  
 հօրե. այլ ոչ 'ի ժամանակի. ապա թէ  
 ոչ՝ և անսկիզբն զնա իմա. քանզի անըս  
 կզբնաբար սկսեալ է յանըսկզբնականն  
 հօրե. մշտնջենաւորակից գոլով ընդ  
 նմա. ույ ասաց նոյն հայր առ որդի.  
 (Թէ ընդ քեզ է ինչ սկիզբն աւուրց  
 զօրութե. յարգանդէ յառաջ քան զա  
 րուսեակ ծնայ զքեզ:) Զի ոչ եթէ որ  
 ծնունդ է և որդի՝ կրտսեր ինչ է այսու  
 քան զհայր. այլ հաւասարակից գոլով  
 հօր որդին և հոգին. պատճառ միայն  
 ունելով զհայր. որդին ծննդեանն. և  
 հոգին նբ բրդամանն. ույ արեգակն. և  
 ծնունդ լոյսն որ 'ինմանէ. և ելումն ճա  
 ռագայթն յառաջ եկեալ: Եւ յիս  
 քին ոչ բոլորովին 'ի ճշմարտութիւնն  
 յանդին. զի լոյս և ճառագայթ յակն  
 արեւուն՝ ազդմունք իմն առաւելեալ

են. քան թէ անձն առ անձին: ԼԵ՛՛՛ Ի  
 հօրե ծնեալ որդին՝ և արտաքս բղխեալ  
 հոգին՝ ըստ էութեան միաշորութե ու  
 նին և զյառկութե առանձնաւորութեցն:  
 ԼԵ՛՛՛ անձանցն առանձնաւորութե՛ն՝ են  
 իմի բնութի. յէութի. և իմչանջենա  
 շորութի. մն որոյ հաւատալի է զնոյն  
 երիս և մի. մի և երեք. ըստ որում և մեզ  
 երեւի նախագաղափարիս այս խրհրդ.  
 որք ի պատկեր նորին անեղութե գոյա  
 ցաք: Յաղագս որոյ և անձաբանն մով  
 սէս խրատե թէ՛ (հայեաց ի քեզ):  
 ԼԵ՛՛՛ թէ ի դրօշեալդ քո հայելով կերպա  
 րան՝ աղօտ ինչ և զսկզբնատպին առցես  
 զնմանութի. քանզի և յորժամ շարադ  
 րեցելոյդ քեզ բաղկացութիք յանհա  
 սութե մնասցեն՝ զպարզն և զանբովան  
 դակելի էութիւն՝ մի՛ ժրտեսցես քողա  
 խնդրել և իսկապէս հասու լինիլ:  
 Ը՛րդ՝ այնքան առ անհասանելին մօտ  
 ես, որքան յօրինակէդ որ ի քեզ՝ նիւթ  
 հասման ընդունիցիս: Չի ըստ որում  
 ի բանականէդ քո հոգւոյ՝ միտքդ ծը  
 նունդ է իբր ի հօրե. և բանդ՝ բղխումն



Իբր յաղբերէ: Եւ յսպէս որդին ծնունդ  
 գողով 'ի հօրէ. և հոգին նա բղխում  
 առ 'ինմանէ: Եւ օրինակն սկսեալ և  
 դադարեալ. միանգամայն և հոսում և  
 ցնդում ընկալեալ. և ճշմարտութիւն  
 թեպէտ սկսեալ, այլ անսկզբնաբար և  
 անժամանակապէս որդի ծնեալ 'ի հօ-  
 րէ. և հոգին նա մշտնջենաբար բղխել  
 'ինմանէ: Ոչ ոմն առաջին և ոմն վեր  
 ջին. և ոչ ոմն 'ինոցունց 'իստորե կամ  
 գեր 'իւլերոյ: Եւ հաւասարապատիւ ք  
 և զուգաւիառք. ոչ ոմն յաջմէ և միւսն  
 յահեկէ. զի այս տեղոյ է գրութի և  
 պարունակում: Եւ անվայրապակ է  
 ընութիւն. միանգամայն և անտեղիք են.  
 և յորոց տեղիքն: Ձի արդեօք բաժա-  
 նին և ևրեին ինքեանք յինքեանս. և  
 յամսն. սակայն յեղէլսս այլազգաբար  
 քան որպէս յինքեանս. զի առ միմեանս  
 եութիւն. և առ մեզ ողորմութիւն. բովան  
 դակ առնս աջակողմ. և բոլորն նոցա  
 դեմք և տեսութիւն: Եւ ասացեալն 'ի  
 գիրս. (նիստ ընդաջմէ իմմէ:) Եւ թի'  
 (նստաւ ընդաջմէ մեծութեն 'իբար  
 ճունս:)

ԼՃ տնօրինական մարդեղութեն որդ  
 ւոյ՝ և համագոյութեն ընդ հօր և յայտ  
 նաբանութիւն: Վրանդի սբայ թագարա  
 կանի երրորդութեանն՝ նմ ինչ հասա  
 րակէ. մի եութիւն երիցն. և մի բնու  
 թիւ. և մի կամք և ներգործութիւն. մի  
 փառք. և մի զօրութիւն. և այլ որ ինչ  
 միանգամայն այսպիսիք. զոր հասարա  
 կաբար զմի մի յայսցանէ իւրաքանչիւր  
 ոք՝ ինչնէ ունի. յաղագս որոյ անբա  
 ժանելիք՝ և ընդ միմեանս միացեալք տե  
 սանին. ոչ ինչ՝ ինչնէ թափուր. և ոչ  
 պարունակողք նց: Որդւոյն հայր տե  
 ղեկացեալ. և հոգւոյն հայր և որդին  
 ծանուցեալ. և եւն նոքիմբք նոքին իմա  
 ցեալ. ըստ այնմ թէ, (՛իքէն և մոր աղ  
 բիւր կենաց. և լուսով երեսաց քոց տե  
 սանեմք զլոյս: ) Ըյսինքն, որդւոյն հո  
 գին տեսեալ զկենաց աղբիւրն որ ՛ի հօ  
 րէ բղխեալ. և հայր որդւոյ և աղբիւր  
 լուսոյ հոգւոյն անժամանակէյ գոլով.  
 սկիզբն և պատճառ. նց. և ոչ ինքն ՛ի նո  
 ցունց. և ոչ յայլմէ պատճառէ. քան  
 զի հայր անսկիզբն և անպատճառ. և

որոց յինքենէն՝ սկիզբն է և պատճառ։  
 Եւ լին այսորին՝ որդի և հոգի սկսեալք  
 են՝ ի հօրէ. զի մի՛ երեք սկզբունք իմաս  
 ցին. և կամ յայլ և յայլ սկզբանց երե  
 եալք. կամ այլոց սկզբունք դռեալ.  
 Իբրու թէ, հայր որդւոյ հայր. և որդի  
 այլում սկիզբն. և որդին հօր. և դաք  
 ճեալ հայր այլոց. քանզի այս՝ յորով  
 սկիզբն երեւեցան տարբերս՝ իմիմեանց.  
 որ է բազմ անժուրթի. կամ անանժուրթի.  
 Եւ ոչ՝ իմիառին ընկալեալ յառաջ ար  
 կելոյն զանձն իւր յատուկսն. կամ ան  
 կարգաբար մի զմիոյ առանձնաւորու  
 թի. կամ շփոթութի. կամ փոխարկու  
 թի առ միմեանս. և լուծումն յերեարս.  
 Իբրու թէ հայր լինիլ երբեմն որդի. և  
 որդին հայր. և հայրն հոգի. քանզի այս  
 ոչ է իմիառաւոր երրորդութին։

Եւ ըստ առանձնաւորութեցն յատ  
 կութի է. և բնութեն միութի. ուն զի  
 յանձնաւորութիսն անշփոթութի ե  
 րեւոցի. և մի բնութեն անճառ միութի  
 հռչակեցի։ Եւ և մի իմն սկիզբն ծա  
 նուցեալ լլցի. քանզի թէպէտ հաւա

Եւ զոր հօր մշանջենաւ որու թիւ է ու թիւ  
 Եւ թիւ թիւ գոն որդի Եւ հոգի. սակայն  
 սկսեալք են ի հօրէ ի միոյ սկզբանէ. Եւ  
 այն անսկիզբն կառարեալ ի կառարե  
 լագունէն. նոյնապակերք Եւ համագոյք  
 Միական երրորդութիւն Եւ երրական մի  
 օւթիւ. մի անձն մի նիւթ. եւ անձնական  
 գիմօք երկրպագեալ փառաւորեմք. ա  
 նեղ. անմարմին. Եւ մշտնջենաւ որ բարի  
 բնականոր. Եւ որ ինչ միանգամ ի բա  
 րեացն իմացեալ. արարիչ անվախճան.  
 Եւ անփոփոխելի տրութիւն. Եւ այլ նամ  
 այսպիսիք. հաւասար երիցն իմանին.  
 զի որ ինչ է ու թիւն են Եւ բնութիւն զոյգ  
 Եւ միաբար՝ երիցն են Եւ ասին. Եւ սի որ  
 ինչ յատուկք են Եւ անանձին՝ անձանցն  
 միայնոյ են Եւ անունանին. ունի հայրն ան  
 ծին Եւ անսկիզբն Եւ անպատճառ միայն  
 ինքն է. ոչ ունեւոր զայս որդին Եւ հո  
 գին. Եւ որդին ծնունդ Եւ որդի. Եւ ոչ բրդ  
 խուան Եւ հոգի. ըստ որում Եւ ոչ հոգին  
 որդի Եւ ծնունդ ասի. քանզի այս է յաւ  
 կութիւն երից անձնաւորութեցն.  
 Եւ ընդհր արդեօք ոչ ըստ երից ան  
 Զանցն



Հանցն է երիս ամուսնի:

Գիտելի է՝ զի յանձնաւորութիւն՝ ող-  
բիմբ կերպարանին յատկութեք. հայր  
անձին և անսկիզբն. որդի ծնունդ և  
սկսեալ. հոգին բղիումն. և այսոքիկ ոչ  
են հուծի և բնութի. այլ ՚ի յեութեն  
և ՚ի բնութեն են յատկութեք. վն որոյ  
և երեք են. իսկ հուծի և բնութի յորս  
սոքա են՝ մի են: Վն որոյ և ամուսնութիւն  
մի է. քանզի ամուսնութի երրորդութեն՝  
՚ի յեութիւն է՝ որ մի է. և ոչ անձնաւո-  
րութեն երեք: Վն անզի ոչ հայրութեն  
և որդիութեն և հոգիութեն, կամ ան  
ծննդեանն և ծնելութեն և ելողութեն՝  
է ամուսնութիւն: Ըյլ միոյ հուծին է ամ-  
ուսնութիւն. յոր տեսել են երեք այս առանձ-  
նաւորութեք և յատկութեք. վն որոյ  
և մի է ամուսնութիւն. զի մի է հուծին որ է  
ամուսնութի. և ոչ երեք ամուսնութի ըստ անձ-  
նաւորութեցն երկց. որք ոչ են հուծիք  
առ անձինք. այլ յեութեն առանձնա-  
ւորութեք միանգամայն. և ժամանեալ  
առ կատարեալն թիւ. այսինքն, յեր-  
րորդութիւն. զի ամ կատարեալ է. վն



որոյ և երրորդութիւն է. ըստ որում ասի  
 ամբասանն թէ՛ միակին շարժեցելոյ մին  
 չեւ յերրէկն. այսինքն, հայր 'ի ծնունդն  
 որդւոյ՝ եկաց մինչև յերրեակն 'ի բրդ  
 խումբն հոգւոյ: Ըսի միակն շարժեալ  
 զի մի՛ նուազութիւն յամուսնին գտցի.  
 և յերկեակն ոչ դադարեաց՝ զի մի՛ ամ  
 ուսն նիւթ և տեսակ կարծեցի. զոր  
 ոմանք 'ի հելլենացւոցն դանդաչեցին.  
 և քան զերրեակն ոչ առաւելաւ՝ զի մի՛  
 բազմ' ամուսնի 'ի նա համարեալ լիցի.  
 այլ յերրեակն եկաց նա. որովք զկա  
 տարելութիւն նոր իմն իմանամք: Չի եր  
 րեակն ունի սկիզբն մէջ և կատարումն.  
 զոր ոչ այլ ոք՝ ի թոռոցն ունի զայս ձև.  
 զի թեպէտ և գոն յայլ թիւսն մէջ և ե  
 ղերք. այլ ոչ ի բրեւ զերիսն. որոյ մէջն  
 և սկիզբն և եզրն զմիութիւնսն. քան  
 զի միութիւն է յերիսն. և յերեքն է միութիւնն:  
 Ույ մի ամուսնն յերիս անձինս,  
 և երեք անձինքն են 'ի մի ամուսնին:  
 Ըստ որում պղատոն ասաց 'ի բանից պի  
 թադորայ թէ՛ ամ անսկիզբն և անվախ  
 ճանն: Երև սբ երրորդութիւն 'ի մի բնութիւն

Թի անսկիզբն և անվախճան. հայր ըս  
 կիզբն և անվախճան. որդի անժամա  
 նակ սկսեալ 'ի հօրէ՝ և անվախճան ընդ  
 հօր: Ակիզբն հայր. և վախճան հոգին.  
 աներբ սկսեալ 'ի հօրէ, և անվախճան  
 իբրև զհայր. որ է վախճան և կատա  
 րումն սբ երրորդութեն, զի այսպէս և  
 բարսեղ ասէ 'ի վեցօրեայն զհոգին սբ:  
 Բ. րդ՝ Թէ որդին և հոգին ծնունդ մի  
 այն էին, կամ բղխումն միայն, հայր և  
 որդիք երկու մի էին. որովք մի անուն  
 թին՝ երկուութի լինէր և ոչ երրորդու  
 թի. որովք կատարելութին անուն է.  
 զի երկու ծնունդն մի իմն էին. կամ  
 թէ երկօքին բղխումն՝ ընդ մի համա  
 րեալ էին: Աս այնորիկ՝ որդին ոչ բրղ  
 խումն 'ի հօրէ իբրև զհօգի. և ոչ հոգին  
 ծնունդ իբրև զորդի. զի մի՛ մարմնա  
 կան ազգակցութի անդ գլտցի երկա  
 ծին և եղբարք երեւեալք. ըստ որում  
 և ոչ որդի 'ի հօգւոյն ծնեալ իբրև 'ի  
 հօրէ. կամ հօգի յորդւոյ բղխեալ. զի  
 մի՛ թողունք անաւանօր իմաստին:  
 Բ. ւլ Բայ հայր միայն ծնող. նոյնպէս և

որդին միայն ծնունդ. և հոգին միայն  
բղխուեալ: Յաղագո այսորիկ և որդին՝

միածին կոչի մն չորից իրաց:

Լուսինն այն՝ զի միայն ծնունդ է հօր  
և ոչ ծնող այլոց. և հայր ծնող նմին. և  
ոչ ինքն ծնունդ այլոց: Երկրորդ՝ կո  
չի միածին՝ զի միայն ծնունդ նա է հօր  
և ոչ այլ ոք. զի Թեպետ և հոգին ևս 'ի  
հօրէ է, սակայն բղխումն և ոչ ծնունդ  
է: Երրորդ՝ ասի միածին՝ զի ամ ծը  
նունդ յերկուց լինի. իսկ նա միայն է  
այնպիսի ծնունդ՝ որ 'ի հօրէ միայն ծը  
նեալ է անմայր. ուն յերկրի անհայր 'ի  
կոյս մօրէ: Չորրորդ՝ զի ամ ծնող ա  
ռաջին է քան զիւր ծնունդն. իսկ աստ  
մի է ծնեալն և ծնողն համագոյք և մըշ  
տըն ջենաւորակիցք: Երրո տարակու  
սին ոմանք Թէ՛ զիւրդ է հնար հաւա  
սար լինիլ ծնողին և ծննդոյ իւրոյ. քան  
զի նոյն ինքն հայր անունդ՝ 'ի յիշելն  
երեւցուցանէ երկցագոյն դու քան զոր  
դին. Թէ և դոյզն ինչ ժամանակ առ  
ցես. զի որչափ և հեռագոյն և անժամա  
նակ և անհաս զտոյն ասիցես հայր՝ երի

ցազոյն երևի քան զորդին:

Գիտնել արժան է. զի այսպիսի կար  
ծիք՝ ի վր նիւթական բնութէն գտա  
նի. և առ մերս հայր և որդի երևի. քան  
զի որ առ մեզս հայր յայլմէ ու մեմէ է՝  
սկիզբն ունի զիւրն հայր. և երբեմն որ  
դի միայն է հօր իւրոյ. և ապա յետոյ  
առնու զհայրութի ի վր որդւոյ իւրոյ.  
վն որոյ այնչափ հաւատար է և ժամա  
նակակից որդւոյ իւրոյ՝ որքան զհայ  
րութին ընկալաւ ի վր նր. և այնու զոր  
մինչ չէրն հայր՝ երկցազոյն է քան զոր  
դին իւր: Եւ աննիւթական բնութին  
ոչ այսպէս. քանզի հայր ամ՝ ոչ յայլ  
մէ ու մեքէ սկսեալ է. և ոչ երբեմն այլոյ  
որդի եղեալ. և զհայրութն յետոյ ստա  
ցեալ: Եւ և միշտ հայր. և յայտնի է  
այս՝ զի որդւոմն է հայրն հայր:

Եւ դ՝ եթէ նա միշտ է հայր, և որդւոմն  
է հայր, ապա և որդին միտնջենաւորա  
կից է նմա որով է նա միշտ հայր:  
Ի՞նչ դարձեալ՝ վն այնորիկ է նա միշտ  
հայր՝ քանզի ամ է. ամ զոր ինչ է և ու  
նի՝ միշտ է. և ոչ յետոյ ստացեալ. և ի

Թերութենէ իմեմէ 'իկատարելութի  
 եկեալ։ Թէ հայր երեց է քան զորդի,  
 յայտ է թէ զայնքան ժամս ոչ էր հայր.  
 Եթերի էր 'իգուշն հայր. եւ յորժամ է  
 զե. հայր՝ կատարելութի ընկալաւ ըզ  
 հայրութեն։ Եւ ևս՝ զի յորժամ եղև  
 հայր, յայլ իրս փոխարկեցաւ, միան  
 դամայն ըդեմ աներհակ գտաւ ինքն  
 ինքեան։ Ընհայրութի հայրութեն՝  
 Եթերին և յետոյ՝ 'իկատարելութի եկելն՝  
 և այլայլեալն՝ և ինքն ինքեան ներհակ  
 եղեալն՝ ոչ է անձ։ Աս որոյ՝ զի հայր ան  
 է. անպարշտութի անձ է զայս առ նմին  
 կարգել։ Ը. և հաւատալ զնա իբրեւ զի  
 անձ է յանձն. ամենեւին ամենակատար և  
 ոչ 'իթերութի 'իլիութի եկեալ. և գի  
 տել զնա մի և միեղէն զորութի. և ոչ  
 բաժանեալ և այլայլեալն։ Ը. և խաղա  
 ղութի 'իվեր քան զմիտս. և խաղաղա  
 րար. և ոչ ներհակ իմն և ընդդիմակ ին  
 քեան։ Եւ հաւատ կազմակերպի 'ի  
 մեզ՝ իմիշտ հայր զնա հաւատալոյն։ Եւ  
 միշտ հայր նա խոստովանեալ. և որդին  
 մշտնջենաւորակից նմին է հաւանցեալ.  
 զի միշտ որդւոյն է նա



միշտ հայր ծանուցեալ. և այսպէս առ-  
ջես իւր հոգւոյն սբայ բղիմանն. և հօր  
բղիողութեն. քանզի հայր միշտ է բրդ  
խօղ հոգւոյն. յայտ է թէ բղիտեալն 'ի  
հօրէ հոգին' մշտնջենաւորակից է հօր  
որով է նախ բղիտեալ:

Եւ թէ ասիցէ ոք թէ' վն յետոյ ծնա  
նելոյ զորդին ևստանալոյ զհայրութն'  
անկատար և թերի երևեր ամ հայր:

Ըպա և զարարածս յետոյ արար որով  
և արարիչ ծանուցաւ. մի թէ և այսու  
երևեսցի' նա թերի գոլ. գիտօսցէ որ  
զայսն ասէ. զի արարածք թէպէտ մար  
մապէս յետոյ եկին յերևումն ևստեղ  
ծան յայ. սակայն իմացականապէս ըս  
կզանատիպք և յարացոյցք սոցա մշտնջե  
նաւորապէս էին առ ամ 'իկամս նր. ո  
րով նա միշտ արարիչ: Ըստ որում մով  
սէս ասէ թէ' (արար ամ զամ բանջար  
վայրի մինչև լեալ էին. և զամ խոտ  
վայրի մինչև բուսեալ էին): Տեսա  
նէս' զի մինչդեռ չեաւ եղեալ էին' ա  
րարեալ եր զնս ամ. այսինքն, զսկիզբն  
նց և զամ արարածոց. քանզի ամ միշտ  
է արարիչ:

Դարձեալ՝ արարչութիւն յամուծութիւն՝  
 ոչ է իբրև զհայրութիւն. զի հայրութիւն  
 առանձնաւորութիւն է. և արարչութիւն  
 բնութիւն. զի հայրութիւն հօրն միայն  
 է. և ոչ որդւոյ և հոգւոյ. զի հոգի և որ  
 դի՝ ոչ են հայր. ունի և հայր ոչ է որդի  
 և հոգի. իսկ արարչութիւն՝ հօր և որդւ  
 ոյ և հոգւոյն է. զի հայր և որդի և հո  
 գի՝ համազօրք են արարչութիւն. զի ար  
 արչութիւն ամուծութիւն է. և հայրութիւն  
 ոչ ամուծութիւն է. այլ յամուծութիւն է. այս  
 ինքն, արարչութիւն միութիւն է որ յե  
 րիս անձնաւորութիւնն է. և հայրութիւն  
 և որդիութիւն և հոգիութիւն՝ երից անձ  
 նաւորութեցն են որ ՚ի միում բնութե  
 ւ յամուծութիւն են : Եւ զի զհայրութիւն  
 հօր՝ և որդիութիւն որդւոյն՝ և  
 զեւրդութիւն հոգւոյն՝ միշտ գոլ ասա  
 ցաք, զմի բնութիւն զայն նոցին համա  
 բեցիս. զի անձնեւորութիւն հօր՝ և ձնե  
 ւորութիւն որդւոյ՝ և եւրդութիւն հոգւոյն՝  
 ոչ է բնութիւն նոցին. զի բնութիւն երիցն  
 մի է : Եւ այսոքիկ յատկութեք առանձ  
 նաւորութեցն են ՚ի բնութիւնն :

Զի թէ զայսոսիկ բնութի գիցես այ՝  
 յերկուս անպարշաութիս հասանիցի  
 անկանիլ։ Կամ երիս բնութիս զնոյնս  
 ասել ըստ երկոց կոչմանն . և զնոյնն իմա  
 նազ ընդդիմակս միմեանց . ոպ անծինն  
 և ծնէլն և ելումն։ Զի այսոքիկ ձայնք՝  
 ընդդիմակք են միմեանց . վս որոյ ներ  
 հակութի ինոսին ասացի։ Զի թէ  
 անծնելութիւն բնութի ե, և նա ւծ ե.  
 զի ւծութիւն բնութի ե, յայտ է թէ  
 ծնելութիւն ոչ է ւծութի. զի ընդդէմ է  
 անծնելութիւն։ Իւ թէ ծնելութիւնն  
 բնութի ե՝ ւծ ե. անծնելութիւնն ոչ է  
 ւծ. նոյնպէս և բազմումն . և այսպէս ե-  
 րեքեան զսկեալ լինին յւծութեանն  
 անձինքն յորս այսոքիկ են։ Իւ կամ  
 թէ մի բնութի ասիցես նք երրորդու-  
 թիւն՝ և զանծնելութիւն և զծնելութիւնն  
 և զեկումն բնութի ասիցես՝ և մի բնութի  
 նոցին, ասլա և փոփոխումն իմիմեանս  
 ընկալցին . ոպ թէ անձն հօր՝ երբեմն  
 լիցի որդի և ծնունդ . և նա հայր . նոյն  
 պէս և հօգին։ Բայա թէ այսոքիկ ան  
 տեղի են և անպարշաութի յոյժ, կամ

Կառակն անձս ասել, Կամ ՚ի միմեանս փո  
 խարկեալս, ուրեմն ուղիղ դաւանութի  
 է՝ զանձնելութիւնն և զձնելութիւնն  
 և զելոյութիւնն և զայլ այսպիսի կոչ  
 մունս առանձնաւորութեցն ոչ բնութի  
 ասել. այլ ՚ի մի բնութեն յատկութիք  
 անձնաւորութեցն: Այլ զասելն միած  
 նին թէ՝ (հայր իմ մեծ է քան զես.) մի  
 ըստ բնութեան համարեսցիս. այլ ըստ  
 պատճառին. զի ծնող է որդւոյ և բղիւօղ  
 հորդոյն որք են մի բնութի. վն որոյ  
 ըստ պատճառին է մեծ և ոչ էութեանն  
 զանազանութե և օտարութե. քանզի  
 մեծն՝ և սառաւել զէակցութիւնն յայտ  
 առնէ. զի մեծն ոչ երբէք ի վն այլ և  
 այլ էութեն ասի. այլ ի վն միոյ և նոյն  
 էութեն. քանզի ոչ ոք ասէ զմարդ քան  
 զձի մեծ. Կամ արծիւ քան զփեղ. այլ  
 մարդ քան զմարդ մեծ. և ձի քան զձի  
 մեծ: Այա թէ էութեն զմեծն հօր հա  
 մարեսցիս, ո՞ւր դիցես զասացեալն վն  
 որդւոյ թէ՝ (ակնկալցօւք մեծին նայ  
 և փրկչին յսի քսի): Այլ զայն՝ (մեծ է  
 տր.) այսինքն հայր. (և մեծ է զօրութի  
 նր.

նր.) այսինքն, որդի. (զի քսե և այլ զ  
րուծի. և իմաստութիւնն այսինքն,  
հոգւոյն սբայ՝ ոչ գոյ չափ:) Եւ կամ  
զոր վս որդւոյ երեմիաս ասէ թէ՝ (ստե  
ան. Թոր. ընդ որում ոչ այլ ոք համա  
րեսցի. յետ այսորիկ ի յերկրի երես  
ցաւ. և ընդ մարդկան շրջեցաւ:)

Մի թէ որդի միայն իցէ ան. և կամ  
վս յերիսն մեծ ասելոյ՝ այլեայլ ան. ք  
իցեն. ուստի քս զանձն հօր վս պատ  
ճառին ասաց. և զեութեն և զանութեն  
զմիաւորութիւնն յայտ արար ասելով.  
(ես և հայր իմ մի եմք:)

Գիտել արժան է. թէ անձնաւորութեն  
յաակութիւնք՝ ոչ քական զանութեն մի  
ութի. և ոչ այլ ցուցանեն զանութիւն  
որդւոյ. զի ծնունդ է. և հոգին բղխում.  
Սի ոհա և ա յադամայ է՝ այլ իկողին.  
և աբել յորովայնէ ադամայ. սակայն  
մի են բնութիւնք նց և ադամայ յորմէ նո  
քին. և ոչ եղբարք միմեանց և ա և ա  
բել. թէպէտ և իմիոյ պատճառէ էին  
յադամայ. ոսկ և ոչ որդի և հոգի եղ  
բարք՝ պատճառ մի ինն ունելով զհայր:



Սնդրելի է և զայս թէ՛ որդի ծնունդ  
 դուրս հոր՝ դադարեաց թէ՛, ևս ծնանի:  
 Գիտել արժան է թէ՛ և ոչ զմի ոք յայս  
 ցանկ պարտ է իմանալ: Չի թէ դա  
 դարեալ ոք ասիցէ՝ 'ի ծնանելոյ' յայտ է  
 ասպա թէ սկսաւ. զի ամ դադարու  
 'ի սկսմանէ է. վս որոյ թէպէտ որդին  
 ւնի 'ի հորէ ւնի է ծնեալ՝ այլ անսկզբնա  
 բար և անժամանակ. ոչ ունեւոյ սկիզբն.  
 վս որոյ և ոչ դադարու: Եւ թէ տա  
 կուէին ևս ծնանի՝ ահա իբրեւ զանկա  
 տար ոք յանդիմանի որդի. և անկատրն  
 զիմորդ յանժու թէն դուրս: Եւ հաւա  
 տալի է զնա ծնունդ հոր միշտ. ոչ սկը  
 սեալք և ոչ դադարեալք: Եւ այսպի  
 սիք՝ են անապատաւ հարցմունք. զոր  
 թէ հարցանիցէ ոք թէ՛ ժամանակ 'ի  
 ժամանակի՛ եղև, թէ ոչ՝ 'ի ժամանակի:  
 Չի թէ 'ի ժամանակի՛ զի՞նչ արդեօք  
 էր այն ան զայս ժամանակ. և թէ  
 յոչ ժամանակի՛ զիմորդ լինէր ինչ և  
 այն ոչ 'ի ժամանակի: Եւ թէ հուպ  
 էիր քեզ յորժամ եղեր՝ և այժմ մը՝  
 ևս քո թէ ոչ. զի թէ մը՝ էիր քեզ,

ասպա երկու ոմն ես դու . Եթէ ոչ ես  
 մերձ քեզ, ասպա օտար ես դու քեզ ին  
 քեան: Եւ այլ թէ՛ զէ՞ն ծնաւ, թէ  
 զոչէն . զի թէ զէն՝ ասպա զեմրդ ծնա  
 նէր զոր էրն . Եթէ զոչէն, ասպա յետոյ  
 է քան զծնողն ծնեալն . նոյնպէս և այս .  
 Թէ դադարեալց, թէ դեռ ևս ծնալի՞:  
 Եւ թէ կամօք հայր ծնաւ զորդի, թէ  
 ոչ . զի թէ ոչ կամօք, ասպա բռնադա  
 տեալ իմն է հայր . Եւ բռնադատեալն ոչ  
 է ձծ . յայտ է թէ՛ և ծնեալն յայնմանէ  
 ոչ է ձծ . Եւ ոչ նա ևս է ձծ: Եւ թէ կա  
 մօք՝ յայտ է եթէ կամացն է ծնունդ որ  
 դի . Եւ ոչ հօր . Եւ ոմն է հայր որդւոյ  
 կամքն հօր քան զհայր: Նոր իմն խըն  
 դիր շարժել եղև յոմանց թէ՛ զի հայր  
 և որդի՝ առինչք են . զմիմեանս 'իմէջ  
 բերեն . Եւ առ իրեարս հակադարձին .  
 ըստ որում և է սահման առընչին թէ՛  
 առինչք ասին, որ ինքեանք որ ինչ են՝  
 յայլոց դու ասին . վստայսորիկ զի հայր  
 որդւոյ է հայր . և որդին հօր է որդի .  
 և հօգին ոչ այսպիսի ինչ ասի . օտար  
 ոմն է 'ի հօրէ և յորդւոյ:

Գիտեիք է՝ զի այսօրիկ անոռանք՝ ոչ  
 եւ բնութիւն. այլ իբնութիւն. քանզի հայ  
 րութիւն իհայր՝ ոչ է բնութիւն. և որդի  
 ութիւն յորդիւն՝ ոչ է բնութիւն. այլ ա  
 ռանձնաւորութիւն և յատկութիւն. վն  
 որոյ և հոգիւն ինոյն բնութիւն հօր և որ  
 դուոյ գոլով՝ ունի զիւրն յատկութիւն  
 առանձնաւորութիւն զհոգի գոլ և զե  
 լուսն. և բնութիւն մի է երկոյն. այսօրիկ  
 իմիում բնութիւն են: Բայա թէ զայս  
 սիկ բնութիւն համարեսցի ոք՝ ուրեմն  
 որդի հօր՝ ասի բան զօրութիւն և իմաս  
 տութիւն. ընդէր ոչ հակադարձի և հայր  
 ասիլ որդուոյն բանի զօրութիւն և իմաս  
 տութիւն: Իսկ թէ առաքական առն  
 չիլն վարեսցին յայս ասելով թէ՝ իմաս  
 տութիւն իմաստնոյն է իմաստութիւն. և  
 իմաստունն իմաստութիւն իմաստուն. գի  
 տասցեն՝ զի այս մարմնականացս է. և  
 ոչ անմարմնոցն. և որք զայս ասեն՝ ի  
 բաց բառնան զեութիւն որդուոյն. զի ըստ  
 մեզ իմաստութիւն և բան՝ ոչ են եութիւն.  
 այլ պատահումն: Երոց և մեք պատաս  
 իանեսցուք մարմնապէս նոցա թէ՝ ըստ

այդմ և հոգին հոգևորի է հոգի. և հո  
գևորն հոգւովն է հոգևոր. զոր ի վր  
ածու թէն անհնար է առնուլ. քանզի  
թեպէտ էակիցն և փառակիցն և այլ այս  
պիսիքս հակադարձին առ իրեարս. զի  
էակիցն ուրումն է էակից. և փառակիցն  
ուրումն է փառակից. սակայն ոչ ամ  
հակադարձութիւն՝ էակցութե է նշա  
նակ: Յաղագս այնորիկ հոգի ասի հո  
գին. ոչ ունելով առհայր և որդին զանդ  
րադարձութիւն. ուն առ իրեարս նոքին:  
Մի այսպիսի ճայնք բնութի կարծես  
ցին. այլ յատկութիւնք՝ իմի բնութեն.  
քանզի հայր և որդի և հոգի ասի՝ յա  
ղագս ամբողջ պահելոյ զերիս անձինս  
իմիում բնութե: Սնդրելի է թէ՛ ըզ  
հայր միայն պարտ իցէ ամ համարել  
վս ասելոյն քսի թէ՛ (հայր՝ տուր նց  
զի ծանկցեն զքեզ միայն ճշմրիտ ամ):  
Գիտել արժան է թէ՛ զկնի ասելոյն.  
(զի ծնկցեն զքեզ միայն ճշմրիտ ամ.)  
Ի վր բերէ թէ՛ (և զոր առաքեցեր զյս  
քս): Ըրդ՝ առ որ ասեն ոմանք թէ՛ ըն  
դէ՛ք ոչ ասաց թէ և զոր առաքեցերդ

զամ զյն քն. կամ Թր. այլ լոկ զիւր  
 անուէն զյն քն: Որոյ պատասխանի  
 տացուք: Սախ զայս ինչ թէ՛ ամ ոք  
 որ ճշմարիտ չէ՛ նա սուտ է. և որ սուտ  
 է՛ չէ այն ինչ որ կոչի: Բ. Բ. Երթամ  
 դտանիցեմք և զորդի ամ քարոզեալ.  
 մի թէ սո՛ւտ ամ պարտ իցեմք զնա կար  
 ծել և ոչ ճշմարիտ: Բ. պա և զվկայուիս  
 իմէջ առցուք՝ որովք որդի ամ քարո  
 զի: Եւսայիաս գրէ թէ՛ (մանուկ ծնաւ  
 մեզ՝ որդի տոճաւ մեզ. որոյ անուէն կո  
 չի ամ հզօր: ) Եւ դարձեալ թէ՛ (ահա  
 կոյս յղասցի և ծնցի որդի. որոյ անուէն  
 կոչի էմմանուէլ. որ թարգմանի ընդ  
 մեզ ամ: ) Բ. Բ. Եթէ ամ է որդի ու  
 գիրն վկայէ յասելն յօհաննու թէ՛ (՛ի  
 սկզբանէ էր բանն՝ և ամ էր բանն: )  
 Յայտ է թէ և ճշմարիտ ամ էր: Ըստ ո  
 րում նոյն յօհաննէս ասէ թէ՛ (և եմք  
 ճշմարտի որդւոյ նր յնի քնի. ) զի ճշ  
 մարտին հօր՝ ճշմարիտ որդի է նա:  
 Ու ինքն ասէր թէ՛ (ես եմ ճշմարտու  
 թի և կեանք: ) Եւ առ ծնէ կոյրն ասէր.  
 (դու հաւատաս յորդին այ. ) և իբրեւ



Հարցեալ եղև թէ ո՞վ է, ասէ յն. (եռ  
եմ որ տեսանեսդ. և խօսիմս ընդ քեզ,  
որում և հաշտաց և երկիրեպագ):

Եւ զոր հրէայքն կամէին քարկոծ առ  
նել՝ զպատճառն ասէ աշխտարանիցն  
թէ՝ (զի հայր իւր կոչէր զւծ. և հաշտ  
սար առնէր զանձն նայ): զորև առ ինքն  
առ փրկիչն ասէին թէ՝ (դու մարդ ես՝  
և զանձն քո նծ առնես): Ըրդ՝ մի թէ  
փախեալ և հրաժարեալց յայսմ կոչմա  
նէ. ոչ արդեօք ի բաց վազեաց. այլ ա  
ռաւելապէս հաստատեաց զայն ի վր  
իւր. որով և ասաց. (թէ զնս նծս կո  
չէ՝ առ որս բանն նայ եղև.) ոմ գերն  
ասէր. (եռ ասացի թէ նծք իցէք՝ և որ  
դիք բարձրելոյ): Եւ զոր հայր սրբէց.  
զայս ըստ մարմնոյն զգեցմանն իմա. և  
առաքեաց յաշխարհ՝ դուք ասէք թէ  
հայհոյես. զի ասացի թէ (որդի նայ եմ):

Ար ի գործոց աստի պարտ էիք ճանա  
չել զի որդի նայ եմ: Եւ որդի նայ ա  
սելն՝ ոչ այլ ինչ ընծայեցուցանէ եթէ  
ոչ՝ զի նծ ճշմարիտ իցէ. զի ոմ իմար  
դոյ մարդ. նոյնպէս յայ նծ է ծնեալն.

և 'ի կենացն կեանք. և 'ի լուսոյն լոյս. և  
 'ի հզօրէն հզօր. այսպէս ամ ճշմարիտ  
 յայ ճշմարտէ է որդի. այլ զճշմարիտն  
 յիշեաց վն որոշելոյ զճշմարիտն ամ  
 'իստոցն որք են կուռք: Եւ Թէ վասն  
 ասելոյն (զի ծանիցեն զքեզ միայն ճրշ  
 մարիտ ամ,) զհայրն միայն կարծիցէ  
 ամ ոք. ապա այնպիսին և 'ի բանիցն է  
 րեմիայի և զորդին միայն համարեսցի  
 գոլ ամ: Քանզի ասէ նա. (սա է ամ  
 մեր. ընդ որում ոչ համարեսցի այլ ոք.  
 որ 'ի յերկրի երևեցաւ. և ընդ մարդ  
 կան շրջեցաւ:) Ասան որոյ իմանալի է  
 ուղղափառ մտաց՝ զի ամուլթին միա  
 պէս է հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. զի  
 ամ է հայր. ամ է և որդին. ամ է և հո  
 գին նր. ըստ որում ասաց պետրոս առ  
 անանիա Թէ՝ (ընդէր ստեցեր հոգւոյն  
 նր. ոչ ստեցեր մարդկան, այլ նր:)  
 Եւ պօղոս ասէ Թէ՝ (տր հոգին է):  
 Եւ երեք անձնաւորուին է ամ. յայտ  
 արար ինքն ասելով առ մովսէս. (ես եմ  
 ամ աբրահամու. և ամ իսահակայ. և  
 ամ յակօբայ.) և զի ոչ երեք ամք, այլ  
 մի

մի անձ. ինքն յայտնեաց ասելովն մով  
 սէսի թէ՛ (ասաց անձ.) այս միուէն է:  
 (Լրացուք մարդ ըստ պատկերի մե-  
 րում և ըստ նմանութե.) այս անձնա  
 ճորութեն: (Եւ արար անձ զմարդն 'ի  
 պատկեր իւր.) այս միութեն. (և ըստ  
 պատկերի այ արար զնա.) այս առանձ  
 նաճորութեն: (Եւ ասէ անձ.) այս մի  
 ութեն: (Լհա եղև ադամ իբրև զմի  
 'իմէն.) այս անձնաճորութեն:  
 (Եւ ասէ նոյ. օրհնեալ տր անձ անձ սե-  
 մայ.) այս անձնաճորութեցն: Ընդ  
 արձակեսցի անձ յարեթի. այս միութեն:  
 Եւ վն աշտարակին ասաց անձ. (եկայք  
 իջցուք և խառնակեսցուք զլեզուս շի-  
 նողացն.) այս յայտնապէս անձնա  
 ճորութեն է: Եւ աբրահամու երևեալ  
 անձ առ կաղնեաւն մամբրէի. իսկապէս  
 զմիութեն իմանամք. և ասելովն (համ-  
 բարձ աբրահամ զաչս իւր՝ և ետես և  
 ահա արք երեք կային 'ի վերոյ քան  
 զինքն.) զերեք անձնաճորութեն հա-  
 ճատամք. ուն և նոյն ընթերցողածն մին  
 չև 'իկատարումն զրուցացս՝ զերից և

զմիոյ խօսի։ Ջկնի այսմ կարգի ասէ  
 գիրն թէ՛ (տեղեաց տր 'իմնէ հուր և  
 ծծումբ 'իսողում.) զանձնաւորութեցն  
 նշանակելով։ (Լ)Շ եղև 'իսատակել տն  
 զքաղաքսն զայնոսիկ, յիշեաց զաբրա  
 համ.) զմիութիւն այսու յայտ արար։  
 Դարձեալ իմանալի է զմի անձնին և  
 զերեք անձնաւորութիւն յայսմանէ. զի  
 հրեշտակն ասաց ցաբրհամ 'իզենումն  
 իսահակայ թէ՛ (յանձն իմ երդնում  
 ասէ տր.) այս բան է 'իդէմս հօր։

Լ)Շ զորդւոյ ասէ դաւիթ առանձ հայր  
 թէ՛ (քո է բազուկ և զօրութիւն.) զոր  
 մեկնէ պօղոս թէ՛ (քս է այ զօրութիւն)։  
 Լ)Շ եգիպտացիքն ասացին մս հարուա  
 ծոյն իւրեանց թէ՛ (մատն այ է այս.)  
 որ նշանակէ զհօգին սբ. զոր քս ասաց  
 յաւետարանին թէ՛ (մատամբն այ հա  
 նեմ զդևս։) Լ)Րդ՝ անձն և բազուկ և  
 մատն՝ որք զանազանեալ են անոշամբ՝  
 և բաժանեալ մասամբ՝ զերեք անձնա  
 ւորութիւն յայտ առնեն զսրբոյ երրոր  
 դութեանն։ Իսկ զի մի իմն կենդանի է  
 անձն և բազուկ և մատն։

Լյսսկէս երեք անձնաւորութիւն մի իմե  
 են բնութիւն. և մի անձ ևարարիչ ևայլն  
 ամբ: Չի ունի բազումն յանձն. և մատն  
 'ի բազումն և յանձն. այսպէս որդի 'ի  
 հայր. և հոգին յորդի և 'ի հայր. ըստ  
 որում հայր յորդի և 'ի հոգի. ունի ասաց  
 քն թէ' (դու հայր յիս' և ես 'ի քեզ):  
 Լյսսկէս և մովսէս զմիութիւն յայտնեաց  
 զսբ երրորդութիւն ասելով. (լուր ի էլ  
 տր անձ քո տր մի է.) և զասացեալն յին  
 քենէ նոյն ինքն յայ թէ' (ես եմ որ  
 էնն.) վս միութիւն իմանամք: Իսկ զա  
 սացեալն եսայեաւ առ ի էլ թէ' (հոգին  
 իմ և բանն իմ որ 'ի միջի քում.) յանձ  
 նաւորութիւնն հաւատամք. նմանապէս  
 և զասացեալն 'ի միջիայ թէ' (ոչ մեր  
 ժեսցէ զնախատինսն որ ասաց, թէ  
 տունն ի էլ բարկացոյց զհոգին տն:)  
 Եւ զոր եսայիաս 'ի դիմաց մարդացե  
 լոյն դրեաց թէ' (տր տր առաքեաց  
 զիս և հոգի նր: ) Եւ դաւիթ ասէ թէ'  
 (երկիր ես զպտուղ իւր. և օրհնեաց ըզ  
 մեզ անձ անձ մեր. անձ մեր օրհնեսցէ  
 զմեզ: ) Եւ թէ' (ասաց տր ցտր իմ.



նիստ ընդաջմէ իմմէ) Եւ թէ՛ (ողոր  
 մութք տն լի եղև երկիր. և բանիւ տն  
 երկինք հաստատեցան. և հոգւով բե  
 րանոյ նր ամ զօրութիք նց.) այս է որ  
 դւով և հոգւով. քանզի (քս է այ ի  
 մաստութի մսէ պօղոս:) Եւ սողումօն  
 թէ՛ (ամ իմաստութք հիմունս էարկ  
 երկրի. պատրաստեաց զերկինս խորհր  
 դով. և հանճարով իւրով զանդունդս  
 պատառեաց. այսինքն, հոգւովն սբւլ:)   
 Զորև մովսէս համազօր սոցին մսէ.  
 (խկզբանէ արար ամ զերկին և զեր  
 կիր.) այս է հայր: Եւ հոգի այ շրջեր  
 ի վր ջուրց կենդանածնելով զարարծս:  
 (Եւ մսաց ամ. եղեցի լոյս.) որ է որ  
 դի: Ու մսաց երեմիա թէ՛ (կոչեաց  
 զլոյս. և լուսաւ նմա դողութք. սա ամ  
 որ յերկրի երևեցաւ:) Եւ սողումօն ա  
 սէ. (զի՛նչ անուն է նր. և զի՛նչ անուն  
 որդւոյ նր:) Բրդ՝ այսօքիկ ամքն՝ և  
 որք այլ իսոյնս յարին՝ զերեք անձնա  
 չօրութին որ իմիում բնութեն և ամ  
 ութեանն է՝ յայտ առնեն: Իսկ մսելն  
 թէ՛ (բան տն որ եղև առ եսայի:)

Եւ պատգամն նոյ որ եղև ի վր երեմի  
 աշխ: Եւ բան տն առ նաւում ելիսա  
 ցի: Եւ այսպէս ասէ տր ամենակալ: )  
 Բայտքիկ ամքն՝ զմի ամծութիւն և զմի  
 տրութի որ յերեք անձնաւորութիւն  
 փառաւորեալ երրորդութիւն է՝ յայտ  
 առնեն: Չոր եսայիաս յայտնապէս ՚ի  
 սերովբէիցն ուսեալ, վարդապետեց ե-  
 կեղեցւոյ զասացեալն. ( սբ. սբ. սբ.  
 տր զօրութեց ) երից սբ ասելովն՝ զե-  
 րեք անձնաւորութիւն միոյ տրութիւն  
 և ամծութիւն յայտնեալ արարին:

Եւ զնոյն մի տր կոչելովն՝ զմի ամծութիւն  
 յերիս անձինս յայտնաբանեցին:  
 Բայլ վեց թւօքն իւրեանց՝ զայս մեզ  
 քարոզեցին. երկօքումք թւօքն ծած-  
 կէին զգլուխս իւրեանց որ է սկիզբն.  
 ցուցանելով թէ ծածկեալ է սկիզբն  
 խնդրել յայ, զի անսկիզբն է: Եւ եր  
 կու թւովքն զոտս իւրեանց՝ որ է վեր  
 ջինն՝ յայտնելով թէ անվերջ և անվախ  
 ճան միայն քննել զնա. և զայն այնչափ՝  
 որքան սերովբէիցն թւքն տան իմանալ.  
 երեք անձնաւորութիւն. և մի բնութիւն

